

2959

Ի. ՍՏԱԼԻՆ

Աջ ԹԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄ Կ (Բ) Կ ՄԵԶ



ՀԱՅԿՈՒՄՀԱՍ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

3K33

Q.69

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

2959

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՈՒ ՄԵՐ
ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վորո՞նք են մեր տարածայնությունները, ինչի՞ հետ են կապված նրանք:

Նրանք, ամենից առաջ, կապված են վերջին ժամանակներու մեր յերկրում ու կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող դասակարգային տեղաշարժերի հարցի հետ: Ընկերներից վոմանք կարծում են, թե տարածայնությունները մեր կուսակցության մեջ պատահական բնույթ ունեն: Սա սխալ է, ընկերները: Սա միանդամայն սխալ է: Տարածայնությունները մեր կուսակցության մեջ ծագել են դասակարգային այն տեղաշարժերի հողի վրա, դասակարգային կալի այն սրման հողի վրա, վոր վերջերս տեղի յե ունենում և վորը բեկում ե ստեղծում դարզացման մեջ: Ընկ. Բուխարինի խմբի գլխավոր սխալն այն է, վոր նա այդ տեղաշարժերն ու այդ բեկումը չի տեսնում, չի տեսնում ու չի ցանկանում դրանք նկատել: Խոկապես հենց սրանով ել բայցարդովում ե կուսակցության ու Կոմինտերնի նոր խնդիրների այն հասկանալը, վորը նոր ուղղվեցիայի բնորոշ գիծն է կաղմում:

Արդյոք գուք նկատեցի՞ք, ընկերները, վոր նոր ուղղվեցիայի ղեկավարները կե-ի և կվ. Հ-ի պլենումում արտասանած իրենց Հառերում միանդամայն զանց առան դասակարգային տեղաշարժերի հարցը մեր յերկրում, վոչ մի խոսքով չհիշեցին դասակարգային կոլի սրման մասին ու հեռավոր ակնարկ անդամ չարին այն մասին, վոր մեր տարածայնությունները կապված են դասակարգային կալի հենց այս սրման հետ: Նրանք խոսեցին ամեն ինչի մասին, թե՛ փիլիսոփայության մասին, թե՛ թեորիայի մասին, բայց մի հատիկ խոսք չասացին այն դասակարգային տեղաշարժերի մասին, վորոնք վորոշում են մեր կուսակցության որիենտացիան ու պրակտիկան ավլալ մոմենտում: Ինչո՞վ ե բացատրվում այս տարրինակությունը: Գուցե մոռացկոտությա՞մբ:



1603

38

И. СТАЛИН
О ПРАВОМ УКЛОНЕ
в ВКП (б)
Армпартиздат, Ереван, 1937

իհարկե, վո՛չ: Քաղաքագետները չեն կարող դլխավորի մասին մոռանալ: Սա այն բանով ե բացատրվում, վոր նրանք չեն տեսնում ու չեն հասկանում հեղափոխական այն նոր պրոցեսները, վորոնք հիմա տեղի յեն ունենում ինչպես մեղանում՝ մեր յերկրում, այնպես ել կապիտալիստական յերկիրներում: Սա այն բանով ե բացատրվում, վոր նրանց աչքից վրիպել ե դլխավորը, վրիպել են այն դասակարգային տեղաշարժերը, վորոնք իր աչքից փախցնելու իրավունք չունի քաղաքագետը: Հենց իսկապես սրանով ել բացատրվում ե այն գլխակորուսությունն ու անզենությունը, վոր ցուցաբերում ե նոր ուղղվեցիան մեր կուսակցության նոր խնդիրների հանդեպ:

Վերհիշեցեք վերջին անցքերը մեր կուսակցության մեջ: Վերհիշեցեք այն լողունդները, վոր վերջին ժամանակներս տվել ե կուսակցությունը մեր յերկրի դասակարգային նոր տեղաշարժերի կապակցությամբ: Յես խոսում եմ այնպիսի լողունդների մասին, ինչպիսին ինքնամադասության լողունդն է, պայքարը բյուրոկրատիզմի դեմ սրելու և խորհրդային ապարատի գործան լողունդն է, տնտեսավարական նոր կարրերի ու կարմիր մասնագետների կազմակերպման լողունդն է, կոլտնտեսային ու խորհտնտեսային շարժման ուժնեղացման լողունդը, կուլակի վրա հարձակվելու լողունդը, ինքնարժեքի իջեցման ու արհմիութենական աշխատանքի պրակտիկայի արժատական բարելավման լողունդը, կուսակցության գործան լողունդը և այլն: Այս լողունդներն ընկերներից միքանիսին թվացին շշմեցուցիչ ու դլխապտույտ առաջացնող լողունդներ: Մինչդեռ պարզ ե, վոր այս լողունդները կուսակցության ամենաանհրաժեշտ ու ամենաակտուալ լողունդներն են ավյալ մոմենտում:

Բանը նրանից սկսվեց, վոր մենք, Շախտիի դործի կապակցությամբ, նորից նոր դրինք անտեսավարական նոր կազմերի հարցը, հին մասնագետներին վուսարինելու համար՝ բանվոր դասակարգի մարդկանցից կարմիր մասնագետներ պատրաստելու հարցը: Ի՞նչ պարզվեց Շախտիի դործի կապակցությամբ: Պարզվեց այն, վոր բուրժուալիսն գետ բնալ ել վերջնականապես չի ջախճախմած, վոր նա մեր անտեսական շնորարության մեջ վնասարարություն ե կազմակերպում ու գեռ կազմակերպելու յե, վոր մեր անտեսական, արհմիութենական ու մասամբ կուսակցական կազմակերպությունների աչքից վրիպեց մեր դասակարգային թշնամիների ականահատման (ՈՋԿՈՒԿՈՒՅ) աշխատանքը, վոր, հե-

անաբար, հարկավոր ե մեր կաղմակերպություններն ամրապնդել ու բարելավել բոլոր ուժերով, բոլոր միջոցներով՝ զարգացնելով ու ամբաղնդելով նրանց դասաստությունը:

Այս կապակցությամբ սրվեց ինքնամադասության լողունդի հարցը: Ինչո՞ւ: Վորովհետեւ չի կարելի բարելավել մեր տնտեսական, արհմիութենական ու կուսակցական կաղմակերպությունները, չի կարելի առաջ շարժել սոցիալիզմի կառուցման և բուժուական վնասարարության սանձահարման դործը՝ ամբողջ ժամանակաշրջանում զնադարձ քննադատությունն ու ինքնաքննադատությունը, մասսաների վերահսկողության տակ չղնելով մեր կաղմակերպությունների աշխատանքը: Իսկ չե՞ վոր սա փաստ ե, վոր վնասարարությունը տեղի յե ունեցել ու շարունակում ե տեղի ունենալ վո՛չ միայն ածխային շրջաններում, այլև մետաղի բնագավառում, այլև ուղմարդյունաբերության բնագավառում, այլև Հաղորդակցության ձանապարհների ժողովրդական կոմիսարիատում, վոսկու և պլատինի արդյունաբերության մեջ և այլն և այլն: Այստեղից՝ ինքնաքննադատության լողունդը:

Այսուհետեւ՝ հացամթերման դժվարությունների կապակցությամբ կուլակության՝ գների խորհրդային քաղաքականության դեմ դուրս գալու կապակցությամբ՝ մենք սրեցինք կուլտնտեսություններն ու խորհունտեսություններն ամեն կերպ դարձացնելու հարցը, կուլակի վրա հարձակվելու, կուլակունեռական տարրերին սղմելու կարգով հացամթերման դժվարություններ կազմակերպելու հարցը: Ի՞նչ պարզեցին հացամթերման դժվարությունները: Նրանք պարզեցին այն, վոր կուլակը քնած չե, կուլակն աճում ե, նա ականահատություններ (ՈՋԿՈՒՅ) ե կաղմակերպում խորհրդային իշխանության քաղաքականության դեմ, իսկ մեր կուսակցական, խորհրդային ու կոստերատիվ կաղմակերպությունները, համենայն գեպս նրանց մի մասը, կամ չեն տեսնում թշնամուն, կամ հարժարվում են նրան՝ վոխանակ նրա դեմ կովելու:

Այստեղից՝ ինքնաքննադատության լողունդի, մեր կուսակցական, կոստերատիվ ու ընդհանրապես մթերող կաղմակերպությունների ստուգման ու բարելավման լողունդի նոր սրումը:

Այսուհետեւ՝ արդյունաբերությունն ու դյուլատնտեսությունը սոցիալիզմի բաղայով վերակառուցման յենթարկելու նոր խնդիրների կապակցությամբ ծագեց ինքնարժեքի սիստեմատիկ իջեցման, աշխատանքային կարգապահության ամրացման, սոցիալիս-

տական մրցակցության ծավալման և այլնի լոգունդը : Այդ խընդիրները պահանջեցին վերանայել արհեստակցական միությունների ու խորհրդային ապարատի ամբողջ պրակտիկան, արժատականորեն աշխուժացնել այդ կազմակերպությունները և զտել այդ կազմակերպությունները բյուրոկրատիզմի տարրերից :

Այստեղից՝ արհմիություններում ու խորհրդային ապարատում բյուրոկրատիզմի դեմ պայքարելու լոգունդի սրումը :

Վերջապես՝ կուսակցության դոման լոգունդի հարցը : Ծիծաղելի կիներ կարծել, թե կարելի յե ամրացնել մեր խորհրդային-տնտեսական, արհմիութենական ու կոռպերատիվ կազմակերպությունները, կարելի յե նրանց մաքրել բյուրոկրատիզմի աղտեղությունից՝ չըրելով (ու օտոչի) բուն իսկ կուսակցությունը : Տաշակույս չի կարող լինել, վոր բյուրոկրատական տարրերը կենդանի յեն վո՛չ միայն տնտեսական-կոռպերատիվ ու արհմիութենական-խորհրդային կազմակերպություններում, այլև բուն իսկ կուսակցության կազմակերպություններում : Յեթե կուսակցությունը բոլոր այդ կազմակերպությունների դեկալար ուժն ե, ապա պարզ ե, վոր կուսակցության դոման այն անհրաժեշտ պայմանն ե, առանց վորի չի կարող մինչև վերջը կենսագործել բանվոր դասակարգի բոլոր մյուս կազմակերպությունների աշխուժացումն ու բարելավումը : Այստեղից՝ կուսակցության զըտման լոգունդը :

Պատահակա՞ն են արդյոք այս լոգունդները : Վո՛չ, պատահական չեն : Դուք ինքներդ եք տեսնում, վոր նրանք պատահական չեն : Նրանք կազմում են անհրաժեշտ ողակները մեկ անխօնի շղթայի, վորը կոչվում ե սոցիալիզմի հարակում կապիտալիզմի տարրերի դեմ :

Նրանք կապված են, նախ և առաջ, մեր արդյունաբերությունն ու մեր գյուղատնտեսությունը սոցիալիզմի բազայի վրա վերակառուցման յենթարկելու ժամանակաշրջանի հետ : Իսկ ի՞նչ ե ներկայացնում ժողովրդական տնտեսության վերակառուցումը սոցիալիզմի բազայի վրա : Նա ներկայացնում է սոցիալիզմի հարձակումը ժողովրդական տնտեսության կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ճակատով : Սա մեր յերկրի բանվոր դասակարգի լրջաղույն տեղաշարժն ե դեպի սոցիալիզմի կառուցման կողմը : Բայց այդ վերակառուցումը կենսագործելու համար հարկավոր և ամենից առաջ բարելավել ու ամրացնել սոցիալիստական շինարարության ինչպես տնտեսական-խորհրդային ու արհմիու-

թենական, այնպես ել կուսակցական-կոռպերատիվ կադրերը, հարկավոր ե սրել (ոտոչի) մեր բոլոր կազմակերպությունները, գրանք մաքրել աղտեղությունից, հարկավոր ե բարձրացնել բանվոր դասակարգի ու գյուղացիության միլիոնավոր մասների ակտիվությունը :

Այնուհետև, այդ լոգունդները կապված են արշավող սոցիալիզմի դեմ ժողովրդական տնտեսության կապիտալիստական տարրերի կողմէց գիմադրություն ցույց տալու փաստի հետ : Զի կարելի պատահականություն համարել այսպես կոչված Շախտիի գործը : «Շախտիականները» հիմա նստած են մեր արդյունաբերության բոլոր ճյուղերում : Երանցից շատերը բռնված են, բայց զեռ բնավլ բոլորը չեն բռնվել : Բուրժուական ինտելիցիայի վնասարարությունը զարդացող սոցիալիզմի դեմ ցույց տրվող գիմադրության ամենավանդապոր ձեռքից մեկն է : Վնասարարությունը վտանգավոր և առավել ևս այն պատճառով, վոր նա կապված է միջազդային կապիտալի հետ : Բուրժուական վնասարարությունն անկանածելի ցուցանիշն ե այն բանի, վոր կապիտալիստական տարրերը դեռևս ամենենին ել ցած չեն դրել զենքերը, վոր նրանք ուժեր են կուսակում խորհրդային իշխանության դեմ նոր յելույթներ կատարելու համար : Ինչ վերաբերում է զյուղի կապիտալիստական տարրերին, ապա ավելի եռ չի կարելի պատահականություն համարել կուլակության յելույթը, վորն արգեն յերկրորդ տարին ե շարունակվում ե գների խորչը գործադիր քաղաքականության դեմ : Շատերը դեռևս մինչեւ այժմ չեն կարողանում բացարել այն փասու, վոր կուլակը հացը տալիս եր ինքնահոսի կարդով մինչեւ 1927 թիվը, իսկ 1927 թից հետո նա զարդարեց ինքնահոսի կարգով հաց տալուց : Բայց այս հանգամանքի մեջ զարմանալի վոչինչ չկա : Յեթե առաջ կուլակը դեռևս համեմատաբար թույլ եր, հարաբերություն չուներ լուրջ կերպով իր տնտեսությունը կարգի զցելու, բավականաչափ կապիտալներ չուներ իր տնտեսությունն ամրացնելու համար, վորի պատճառով նա հարկադրված եր շուկա հանելու իր հացի արտադրության բոլոր կամ համարյա բոլոր ավելցուկները, ապա այժմ, մի չարք բերքառաւ տարիներից հետո, յեր նա կարողացել ե տնտեսապես սարքվել, յեր նրան հաջողվել ե անհրաժեշտ կապիտալներ կուտակել, ևս հարաբերություն ե ստացել շուկայում մանելվելու, ևս հնարավորություն ե ստացել վորպես իր ռեզերվ հետ դնելու հացը, վայցուաների այդ վ-

Այստան, զերաղասելով չուկա հանել միս, վարսակ, դարի ու
այլ յերկրորդական մշակույթները։ Ծիծաղելի կլիներ այժմ հու-
սալ, թե հացը կուլակից կարելի յն կամայոր կերպով վերցնել։
Ահա վորանգ և այն դիմադրության արմատը, վոր այժմ կուլակը
ցույց է տալիս խորհրդային իշխանության քաղաքականությանը։

Իսկ ի՞նչ են ներկայացնում քաղաքի ու դյուլի կապիտալիս-
տական տարրերի դիմադրությունը սոցիալիզմի արշավին։ Դա
պրոլետարիատի գանձարդարային թշնամիների ուժերի վերախմբ-
րավորումն է, վորի նախատակը հինը նորի դեմ պաշտպանելն է։
Դժվար չեն հասկանալ, վոր այս հանդամանքները չեն կարող գու-
սակարգելի կովի սրում չառաջնել։ Բայց վորպեսզի գանձարդ-
րային թշնամիների դիմադրությունը հետ մղենք և սոցիալիզմի
առաջնադաշտացման համար ճանապարհ մաքրենք, հարկավոր ե,
բացի մնացած բոլոր բաներից, սրել մեր բոլոր կազմակերպու-
թյունները, նրանց մաքրել բյուրոկրատիզմից, բարելավել նրանց
կաղըերն ու մորիլիցացիայի յենթարկել բանվոր գանձարդի ու
դյուլի աշխատավորական խավերի մելիոնավոր մասսաներին
ընդգեմ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի։

Ահա թե ինչպիսի դասակարգային տեղաշարժերի հողի վրա
յեն ծագել մեր կուսակցության այժմյան լողունդները։

Նույն այդ բանը հարկավոր ե ամել կապիտալիստական յեր-
կիրներում տեղի ունեցող դասակարգային տեղաշարժերի մասին։
Ծիծաղելի կլիներ կարծել, թե կապիտալիզմի կայունացումն ա-
ռանց փոփոխությունների յն մնացել։ Առավել ևս ծիծաղելի կլի-
ներ պնդել, թե կայունացումն ամրապնդվում, հաստատուն ե
դառնում։ Իրականում կապիտալիզմի կայունացումը խարխլվում
ու սասանվում ե ամսե-ամիս, որեցոր։ Շուկաների ու հումքի
համար մղվող պայքարի սրումը, սպառազինումների աճումը,
Ամերիկայի ու Անգլիայի հակամարտության աճումը, սոցիալի-
զմի աճումը ԽՍՀՄ-ում, կապիտալիստական յերկիրների բանվոր
դասակարգի ձախացումը, ամբողջ մի շարք գործադրումներ ու
դասակարգային մարտեր Յելլուպայի յերկիրներում, հեղափոխա-
կան շարժման աճումը զաղութներում, այդ թվում՝ Հնդկաստա-
նում, կոմունիզմի աճումն աշխարհի բոլոր յերկիրներում, —այս
ամենն այնպիսի փաստեր են, վորոնք անտարակուսելի կերպով
խոսում են այն մասին, վոր կապիտալիզմի յերկիրներում հեղա-
փոխական նոր վերելքի տարրեր են աճում։

Այստեղից՝ պայքարը սրելու խորիրը սոցիալ-դեմոկրատիայի

և, ամենից առաջ, նրա «ձախ» թեր՝ վորպես կապիտալիզմի
սոցիալական հենարանի՝ դեմ։ Այստեղից՝ սպայքարը սրելու խնդի-
րը կոմկուսակցություններում յեղած աջ տարբերի՝ վորպես սո-
ցիալ-դեմոկրատական աղղեցության դորժակալության՝ դեմ։
Այստեղից՝ պայքարը սրելու խնդիրը աջ թեքման նկատմամբ
շուցաբերվող հաշմականության՝ վորպես կոմկուսակցու-
թյուններում ողորոտնիզմի պատապարան հանդիսացողի՝ դեմ։
Այստեղից՝ կոմկուսակցությունները սոցիալ-դեմոկրատական
տրադիցիաներից մաքրելու լողունդը։ Այստեղից՝ կոմունիզմի
այսպես կոչված նոր տակտիկան արհմիություններում։ Ընկերնե-
րից վոմանք չեն հասկանում այս լողունդների իմաստն ու նշա-
նակությունը։ Բայց մարքսիստը միշտ կհասկանա, վոր առանց
այս լողունդները կենսագործելու՝ աներևակայելի յե պրոլետա-
րական մասսաներին գանձարդացին նոր մարտերի պատրաստե-
լը, աներևակայելի յե սոցիալ-դեմոկրատիային հաղթելը, ան-
կարելի յե կատարել կոմունիստական շարժման խկական լիդեր-
ների ընտրանք, —լիդերների, վորոնք ընդունակ լինելին բանվոր
դասակարգին առաջնորդելու դեպի կոփլ։ կապիտալիզմի տա-
պալման համար։

Ահա, ընկերներ, դասակարգային այն տեղաշարժերը մեր
յերկրում ու կապիտալիզմի յերկիրներում, վորոնց հիման վրա
առաջացել են մեր կուսակցության այժմյան լողունդներն ինչպես
նրա ներքին քաղաքականության դժով, այնպես ել կոմինտերնի
դժով։

Մեր կուսակցությունը տեսնում է այդ դասակարգային տե-
ղաշարժերը։ Նա հասկանում է նոր խնդիրների նշանակությունը
և մորթիզմի աճումը ուժերը՝ այդ խնդիրները լու-
ծելու համար։ Այս պատճառով նա լիասպառաղեն է դիմավորում
անցքերին։ Այս պատճառով նա չի վախենում իր առաջ կանգնած
դժվարություններից, վորովհետև պատրաստ ե նրանց հաղթա-
հարելու։

Նոր սպողիցիայի դժբախտությունը, ընկ. Բուխարինի խմբի
դժբախտությունն այն է, վոր նա չի տեսնում այս դասակար-
գային տեղաշարժերն ու չի հասկանում կուսակցության նոր
խնդիրները։ Յեկ հենց այն պատճառով, վոր նա դրանք չի հաս-
կանում, նա լիակատար դիմակորուսության վիճակ է ապրում,
նա պատրաստ է փախչելու դժվարություններից, նահանջելու
նրանց հանդեպ, հանձնելու դիրքերը։

Արդյոք գուշ տեսած կա՞ք ձկնորսներ վոթորկից առաջ մէ մեծ գետի վրա, ինչպես Յենիսեյն ե: Յես նրանց շատ եմ տեսել: Պատահում ե, վոր ձկնորսների մի խումբը վրա հասած փոթորկի հանդեպ մորիլիզացիայի յե յենթարկում իր բոլոր ուժերը, վողեղում և իր մարդկանց ու համարձակ կերպով մակույկը տանում ե ընդդեմ փոթորկի: «Տղէ՛րք, ամուր բոնեք ղեկից, ճեղքեցե՛ք ալիքները, մենք կհաղթենք»: Բայց ձկնորսների այլ տեսակն ել և լինում, վորոնք, փոթորկիը նախազդալով, վհատվում են, սկսում են նվազալ ու բարոյալքում են իրենց իսկ սեփական շարքերը. «Ա՛յ քեդ դժբախտություն, փոթորկի և սկավում, տղէ՛րք, փուլեցե՛ք մակույկի հատակին, աչքներդ փակեցե՛ք, գուցե մի կերպ ափ հանի»: (Ընդհանուր ծիծառ): Ել հարկ կա՞ ասլացուցելու, վոր ընկ. Բուխարինի խմբի դիրքավորումն ու վարքագիծը, ինչպես ջրի յերկու կաթիլ, նման են յերկրորդ խմբի այն ձկնորսների դիրքավորմանն ու վարքագծին, վորոնք դժվարությունների հանդեպ խուճապով նահանջում են:

Մենք ասում ենք, թե Յեվրոպայում հեղափոխական նոր կերելքի պայմաններ են հասունանում, վոր այս հանդամանքը մեղ թելազգում ե նոր խնդիրներ՝ կոմկուսակցություններում գոյություն ունեցող աջ թեքման դեմ պայքարն ուժեղացնելու և աջ ուկլոնիստներին կուսակցությունից վոնդելու վերաբերյալ, հաշտվողականության դեմ պայքարն ուժեղացնելու վերաբերյալ, հաշտվողականություն, վորը քողարկում և աջ թեքումը, կոմկուսակցություններում գոյություն ունեցող սոցիալ-դեմոկրատական տրադիցիաների դեմ պայքարն ուժեղացնելու վերաբերյալ և այլն և այլն: Իսկ ընկ. Բուխարինը մեղ պատասխանում է, թե այս ամենը զատարկ բան ե, թե մեզանում վոչ մի այդպիսի նոր խնդիր չկա, թե իրապես խոսքն այն մասին ե, վոր Կկ-ի մեծամասնությունը ցանկանում ե «մշակել» նրան, այսինքն ընկ. Բուխարինին:

Մենք ասում ենք, թե մեր յերկրում յեղած զատակարգային տեղաշարժերը մեղ թելազրում են նոր խնդիրներ, վորոնք պահանջում են սիստեմատիկաբար իջնեցնել ինքնարժեքը և ամրացնել աշխատանքային կարգապահությունը ձեռնարկություններում, վոր այս խնդիրների կենսագործումն անհնարինաց առանց արմատապես փոխելու ամբողջ պրակտիկան արհեստակցական միությունների աշխատանքի մեջ: Իսկ ընկ. Տոմսկին մեղ պատասխանում է, թե այդ ամենը զատարկ բան ե, թե մեզանում վոչ մի

այդպիսի նոր խնդիր չկա, թե իրապես խոսքն այն մասին ե, վոր Կկ-ի մեծամասնությունը ցանկանում ե «մշակել» նրան, այսինքն ընկ. Տոմսկուն:

Մենք ասում ենք, թե ժողովրդական տնտեսության վերակառուցումը մեղ թելազրում ե նոր խնդիրներ՝ պայքարը լ-րհդային-տնտեսական ապարատի բյուրոկրատիզմի դեմ ուժեղացնելու վերաբերյալ, այդ ապարատը փտած ու խորթ տարբերից, վնասարաններից մաքրելու վերաբերյալ և այլն և այլն: Իսկ ընկ. Ռիկովը մեղ պատասխանում է, թե այս ամենը դատարկ բան ե, թե մեզանում վոչ մի այդպիսի նոր խնդիր չկա, թե իրապես խոսքն այն մասին ե, վոր Կկ-ի մեծամասնությունը ցանկանում ե «մշակել» նրան, այսինքն ընկ. Ռիկովին:

Ե, մի՞թե սա ծիծաղելի չե, ընկերներ՝: Մի՞թե պարզ չե, վոր ընկ. ընկ. Բուխարինը, Ռիկովը և Տոմսկին իրենց պորտից բացի վոչինչ չեն տեսնում աշխարհում:

Ընկ. Բուխարինի խմբի դժբախտությունն այն ե, վոր այդ խումբը չի տեսնում դասակարգային նոր աշեղաշարժերն ու չի հասկանում կուսակցության նոր խնդիրները: Յեվ հենց այն պատճառով, վոր այդ խումբը զբանք չի հասկանում, նա ստիպած ե քարշ գալ անցքերի պոչից ու դժվարությունների հանդեպ փաս հայտարարել:

Ահա թե վորտեղ և մեր տարածայնությունների արժատը:

ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԵՐՆԻ ԳԾՈՎ

Յես արդեն առացի, վոր ընկ. Բուխարինը չի տեսնում ու չի հասկանում Կոմինտերնի այն նոր խնդիրները, վորոնք վերաբերում են կոմկուսակցությունների միջից աջերին վոնդելուն, հաշտվողականությունը ասնձահարելուն և կոմկուսակցությունները սոցիալ-դեմոկրատական տրադիցիաներից մաքրելուն, խընդիրներ, վոր հեղափոխական նոր վերելքի աճող պայմաններն են թերարում։ Կոմինտերնի հարցերի վերաբերյալ մեր տարածայնություններն ամբողջությամբ հաստատեցին այս դրույթը։

Ինչի՞ց սկսվեցին տարածայնություններն այս բնագավառում։

Բանն սկսվեց միջազգային դրության վերաբերյալ ընկ. Բուխարինի թեղիսներից ՎI կոնգրեսում։ Սովորաբար թեղիսները կանխապես քննության եյին առնվում Համկար պատվիրակության մեջ։ Սակայն ամյալ դեպքում այս պայմանը պահպանված չի յեղել։ Այնպես դուրս յեկավ, վոր ընկ. Բուխարինի ստորագրությունը կրող թեղիսները, վորոնք ուղղված եյին Համկար պատվիրակությանը, միաժամանակ ուղարկվել եյին ՎI կոնգրեսի ուսուրերկրյաց պատվիրակություններին։ Բայց թեղիսները մի ամբողջ շարք կետերում անբավարար դուրս յեկան։ Համկար պատվիրակությունը հարկ համարեց մոտ 20 ուղղում մտցնել թեղիսների մեջ։

Այս հանդամանքը վորոշ անհարմարություն ստեղծեց բնկ. Բուխարինի դրության մեջ։ Իսկ ո՞վ ե մեղավոր դրանում։ Բնկ. Բուխարինին ինչո՞ւ յեր հարկավորվել թեղիսներն ուսուրերկրյաց պատվիրակություններին ուղարկել նախքան դրանց քննության առնվելը Համկար պատվիրակության կողմից։ Կարո՞ղ եր արդյոք Համկար պատվիրակությունն ուղղումներ չմտցնել, յեթե թեղիսներն անբավարար դուրս յեկան։ Յեվ ահա այնպես սահացից, վոր Համկար պատվիրակությունը մտցրեց մի ուղղում, վորից յերևում ե, վոր կապիտալիստական կայունացումը Համկար համար։ Սասանվում ե, թե՝ ամբանում կապիտալիստական կայունացումը, սրանից ե կախված կոմկուսակցությունների ամբողջ գիրքավորումը նրանց ամենորյա քաղաքական աշխատանքում։ Արդյոք մենք հեղափոխական շարժման անկման ժամանակաշրջանը ենք ապրում, ուժերի սոսկական հավաքման ժամանակաշրջան, թե՝ հեղափոխական նոր վերելքի պայմանների աճման ժամանակաշրջան ենք ապրում, բանվոր դաստիարակը

վորոնք ուսուրերկրյա պատվիրակությունների կողմից սկսեցին հակագրվել ընկ. Բուխարինի ստորագրած հին թեղիսներին։ Պարզ ե, վոր այս անհարմարությունը չեր լինի, յեթե ընկ. Բուխարինը չտապէր իր թեղիսներն ուսուրերկրյա պատվիրակություններին ուղարկել։

Յես կցանկանայի նշել չորս հիմնական ուղղումներ, վոր Համկար պատվիրակությունը մտցրել եր ընկ. Բուխարինի թեղիսների մեջ։ Յես կցանկանայի նշել այս հիմնական ուղղումները նրա համար, վոր ավելի պարզ ցուցադրեմ տարածայնությունների բնույթը կոմինտերնի հարցերի վերաբերյալ։

Առաջին հարցը—դա կապիտալիզմի կայունացման բնույթի հարցն ե։ Ընկ. Բուխարինի մոտ նրա թեղիսներում այնպես եր գուրս գալիս, վոր ավյալ մոմենտում տեղի չի ունենում վոչ մի նոր, կապիտալիստական կայունացումը սասանեցնող բան, վոր, բնդհակառակը, կապիտալիզմը վերակառուցվում ե ու հիմնականում քիչ թե շատ հաստատուն ե մնում։ Պարզ ե, վոր Համկար պատվիրակությունը չեր կարող համաձայնել այսպես կոչված յերրորդ ժամանակաշրջանի, այսինքն՝ այն ժամանակաշրջանի այդպիսի բնութագրեն, վոր մենք այժմ ենք ապրում։ Նա չեր կարող համաձայնել դրան, վորովհետև յերրորդ ժամանակաշրջանի այդպիսի բնութագրի պահպանումը կարող եր նյութ տալ մեր քննադատաներին խոսելու այն մասին, թե մենք կանդնում ենք կապիտալիզմի այսպես կոչված «առողջացման» տեսակետի վրա, այսինքն՝ զիլֆերդինդի տեսակետի վրա, մի աեսակետ, վորի վրա մենք, կոմունիստներս, չենք կարող կանդնել։ Այս բանը նկատի ունենալով՝ Համկար պատվիրակությունը մտցրեց մի ուղղում, վորից յերևում ե, վոր կապիտալիստական կայունացումը Համկար համար։ Սասանվում ե, թե՝ ամբանում կապիտալիստական կայունացումը, սրանից ե կախված կոմկուսակցությունների ամբողջ գիրքավորումը նրանց ամենորյա քաղաքական աշխատանքում։ Արդյոք մենք հեղափոխական շարժման անկման ժամանակաշրջանը ենք ապրում, ուժերի սոսկական հավաքման ժամանակաշրջան, թե՝ հեղափոխական նոր վերելքի պայմանների աճման ժամանակաշրջան ենք ապրում, բանվոր դաստիարակը

գալիք դասակարգային մարտերին նախապատրաստելու ժամանակաշրջան,—սրանից ե կախված կոմկուսակցությունների տակախական դիրքավորումը։ Համեկ պատվիրակության ուղղումը, վորը հետո ընդունել ե կոնդրեսը, իսկապես հենց նրանով ե լով, վոր նա պարզ դիրքավորում ե տալիս յերկրորդ հեռանկարի նկատմամբ, հեղափոխական նոր վերելքի պայմանների աճման հեռանկարի նկատմամբ։

Յերկրորդ հարցը—դա սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարելու հարցն ե։ Ընկ. Բուխարինի թեղիսներում խոսվում եր այն մասին, վոր սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարելը կոմինտերնի սեկցիաների հիմնական ինդիրներից մեկն ե։ Այս, իհարկե, ձիւտ ե։ Բայց այդ բավական չե։ Վորպեսզի պայքարը սոցիալ-դեմոկրատիայի դեմ հաջողությամբ ընթանա, անհրաժեշտ է սրել հարցը սոցիալ-դեմոկրատիայի այսպես կոչված «ձախ» թեր դեմ, հենց այն «ձախ» թեր դեմ մղվող պայքարի վրա, վորը, «ձախ» Փրադների հետ խաղալով ու այդպիսով բանվորներին ձարպկորեն խարելով, արգելակում ե սոցիալ-դեմոկրատիայից հեռանալու գործը։ Պարզ ե, վոր առանց «ձախ» սոցիալ-դեմոկրատներին ջախջախելու՝ անհնար ե ընդհանրապես սոցիալ-դեմոկրատիային հաղթահարելը։ Մինչդեռ ընկ. Բուխարինի թեղիսներում միանդամայն զանց արված գուրս յեկավ «ձախ» սոցիալ-դեմոկրատիայի հարցը։ Այս, իհարկե, մեծ պակասություն ե։ Այս պատճառով Համեկ պատվիրակությունը հարկ զգաց ընկ. Բուխարինի թեղիսների մեջ մտցնելու համապատասխան ուղղում, վորը հետո ընդունվեց կոնդրեսի կողմից։

Յերրորդ հարցը—դա կոմինտերնի սեկցիաներում յեղած հաշտողականության հարցն ե։ Ընկ. Բուխարինի թեղիսներում խոսվում եր աջ թեքման դեմ պայքարելու անհրաժեշտության մասին, բայց այնտեղ չկար վոչ մի բառ աջ թեքման նկատմամբ հաշտողականություն ցուցաբերելու դեմ պայքարելու մասին։ Այս, իհարկե, մեծ պակասություն ե։ Բանն այն ե, վոր յերբ պատերազմ ե հայտարարվում աջ թեքմանը, աջ ուկլոնիստները սովորաբար գունափոխվում—դառնում են հաշտողականներ և կուսակցությանը դժվար կացության մեջ են զնում։ Աջ ուկլոնիստների այս մանյովը կանխելու համար անհրաժեշտ է հաշտողականության դեմ վճռական պայքար մերելու հարց դնել։ Այդ պատճառով Համեկ պատվիրակությունն անհրաժեշտ համարեց

ընկ. Բուխարինի թեղիսների մեջ մտցնել համապատասխան ուղղում, վոր հետո ընդունվեց կոնդրեսի կողմից։

Չորրորդ հարցը—դա կարգապահության հարցն ե։ Ընկ. Բուխարինի թեղիսներում հիշատակություն չկար կոմինտերներություններում յերկաթե կարգապահություն պահպաններու անհրաժեշտության մասին։ Այս նույնպես պակաս կարենոր թերություն չե։ Ինչո՞ւ։ Վորովհետև աջ թեքման դեմ պայքարն ուժեղացնելու ժամանակաշրջանում, կոմինտերներն ուղղութունիստական տարրերից մաքրելու լողունդի կենսագործման ժամանակաշրջանում, աջ ուկլոնիստները սովորաբար կաղմակերպիլում, Փրակցիա յեն կազմում, իրենց սեփական Փրակցիոն կարգապահություններ ստեղծում, իսկ կուսակցության կարգապահությունը իսկանում ու կործանում են։ Աջ ուկլոնիստների Փրակցիոն արտելներից կուսակցությանը պաշտպանելու համար անհրաժեշտ է զնել կուսակցության յերկաթե կարգապահության ու կուսակցության անդամների կողմից այդ կարգապահության անպայման յենթարկելու հարցը։ Առանց սրան աջ թեքման դեմ Մըրօբեն պայքարելու մասին մտածելն անդամ ավելորդ ե։ Այս պատճառով Համեկ պատվիրակությունն ընկ. Բուխարինի թեղիսների մեջ մտցրեց համապատասխան ուղղում, վորը հետո ընդունվեց ՎԻ կոնդրեսի կողմից։

ՄԵՆՔ կարո՞ղ ենք արդյոք այս ուղղումները չմտցնել ընկ. Բուխարինի թեղիսների մեջ։ Պարզ ե, վոր չեյինք կարող։ Հնում Պլատոն փիլիսոփայի մասին տառմ եյին. Պլատոնին մենք սիրում ենք, բայց ե՛լ ավելի սիրում ենք ճշմարտությունը։ Նույն այդ բանը կարելի կլիներ ասել ընկ. Բուխարինի մասին. Բուխարինին մենք սիրում ենք, բայց ճշմարտությունը, բայց կուսակցությունը, բայց կոմինտերնը մենք ե՛լ ավելի յենք սիրում։ Այս պատճառով Համեկ պատվիրակությունը հարկադրված յեղավ այդ ուղղումները մտցնել ընկ. Բուխարինի թեղիսների մեջ։

Սա կոմինտերնի հարցերի վերաբերյալ մեր տարածայնությունների, այսպես ասած, առաջին ետապն ե։

Մեր տարածայնությունների յերկրորդ ետապը կապվում ե այսպես կոչված ՎիտորՓի ու Թելմանի գործի հետ։ ՎիտորՓը—դա Համբուրդի կաղմակերպության նախկին քարտուղարն ե, վոր մեղաղըլել ե կուսակցական փողերը վատնելու մեջ։ Դրա համար նա վտարվեց կուսակցությունից։ Գերմանական կոմինտերակցության կենտրոնում դանվող հաշտողականները, ոգտվելով

այն բանից, վոր Վիտտորֆը մոտ ե յեղել ընկ. Թելմանին, թե-պետև ընկ. Թելմանը վոչ մի ընդհանուր բան չուներ Վիտտորֆի հանցաղործության հետ, Վիտտորֆի դործը վերածեցին Թելմանի դործի ու սկսեցին տապանել գերմանական կոմկուսակցության զեկավարությունը։ Դուք յերեխ մամուլի հաղորդադրություն-սերից արդեն դիտեք, վոր հաշտվողականներ Եվերտին ու Գեր-հարտին այն ժամանակ հաջողվեց ժամանակավորապես իրենց հետեւց տանել գերմանական կոմկուսակցության կենտրոմի մե-ժամանությունն ընկ. Թելմանի դեմ։ Յեվ ի՞նչ։ Նրանք Թելմա-նին հեռացրին զեկավարությունից, սկսեցին մեղաղը նրան կաշուակերության մեջ (կօրրոպար) և «Համապատասխան» բա-նաձև հրապարակեցին առանց կոմինտերնի Գործկոմի դիտության ու սանկցիայի։ Այսպիսով, հաշտվողականության դեմ պայքա-րելու՝ կոմինտերնի ՎԻ կոնդրեսի դիրեկտիվն իրադորձելու փո-խարեն, աջ թեքման ու հաշտվողականության դեմ պայքարելու փոխարեն իրականում ստացվեց այդ դիրեկտիվի ամենակոսպիտ խախտում, ստացվեց պայքար գերմանուկան կոմկուսակցության հեղափոխական զեկավարության դեմ, պայքար ընկ. Թելմանի դեմ, մի պայքար, վորը նպատակ ուներ քողարկելու աջ թե-քումը և հաստատելու հաշտվողականությունը գերմանական կո-մունիստների շարքերում։

ՅԵՎ ահա, զեկը գարձնելու և դրությունը շտկելու փոխարեն, ՎԻ կոնդրեսի խախտված դիրեկտիվի իրավունքները վերականգ-նելու, հաշտվողականներին կարգի հրավիրելու փոխարեն, ընկ. Բուխարինն իր հայտնի նամակում առաջարկում է ասնկցիա ու հաշտվողականների հեղաշրջմանը, Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը հանձնել հաշտվողականներին, իսկ ընկ. Թել-մանին նորից անվանարկել մամուլում՝ մեկ անդամ ևս հայտարա-րություն անելով նրա մեղաղը ության մասին։ ՅԵՎ սա կոչվում է կոմինտերնի «զեկավարը»։ Բայց մի՞թե աշխարհում լինում են այսպիսի «զեկավարներ»։

Կենտկոմը քննարկեց ընկ. Բուխարինի առաջարկն ու մերժեց այն։ Սա, իհարկե, գուր չեկավ ընկ. Բուխարինին։ Բայց այս-տեղ ո՞վ ե մեղաղը։ ՎԻ կոնդրեսի վորոշումները նրա համար չեն ընդունվել, վոր նրանք խախտենք, այլ նրա համար, վորպես-դի նրանք կատարենք։ ՅԵԹԵ ՎԻ կոնդրեսը վորոշել ե պայքար հայտարել, աջ թեքման ու հաշտվողականությանը, զեկավա-րությունը պահելով գերմանական կոմկուսակցության հիմնական

միջուկի ձեռքին՝ ընկ. Թելմանի գլխավորությամբ, իսկ հաշտ-վողականներ Եվերտին և Գերհարտի խելքին փչել ե տապալել այդ վորոշումը, ապա ընկ. Բուխարինի պարտականությունն այն եր, վոր հաշտվողականներին կարգի հրավիրեր և վոչ թե գեր-մանական կոմկուսակցության զեկավարությունը նրանց իոնդներ։ Մեղավորն ընկ. Բուխարինն ե, վոր «մոռացել ե» ՎԻ կոնդրեսի վորոշումները։

Մեր տարածայնությունների յերրորդ ետապը կապվում ե դերմանական կոմկուսակցության մեջ աջերի դեմ պայքարելու հարցի հետ, Բրանդերի ու Տալհայմերի Փրակցիան ջախախելու և այլ Փրակցիայի լիդերներին գերմանական կոմկուսակցությունից վտարելու հարցի հետ։ Ընկ. Բուխարինի ու նրա բարեկամ-ների «գերբն» այս կարդինալ հարցում այն եր, վոր նրանք շա-րունակ խուսափում եյին այս հարցի լուծմանը մասնակցելուց։ Բայտ բանի եյության վճռվում եր գերմանական կոմկուսակցու-թյան բախտի հարցը։ Իսկ ընկ. Բուխարինն ու նրա բարեկամնե-րը, իմանալով այդ, այնուամենայնիվ, շարունակ արգելակում եյին գործը՝ սիստեմատիկաբար խույս տալով համապատասխան ինստանցիոններին նիստերին մասնակցելուց։ Հանուն ինչի՞ ՅԵՐԵՒ հանուն այն բանի, վորպեսզի «մաքուր» մնան թե՛ կոմինտերնի առաջարկած թե՛ գերմանական կոմկուսակցության մեջ յեղած աջերի առաջ։ Հանուն այն բանի, վորպեսզի հետո կարելի լինի ասել։ «ՅԵՎ վո՞չ թե մենք, բուխարինականներս, այլ նրանք, կենտկոմի մեծամասնությունն անցկացրեց Բրանդերի ու Տալհայմերի վտա-րումը կոմկուսակցությունից»։ ՅԵՎ սա կոչվում ե պայքա՛ր աջ վտանդի դեմ։

Վերջապես, մեր տարածայնությունների չորրորդ ետապը։ Նա կապված է կկ-ի նոյեմբերյան պլենումի նախորեյին ընկ. Բուխարինի կողմից արված պահանջի հետ այն մասին, վոր ընկ. ՆԵՐՄԱՆը Գերմանիայից հետ կանչվի, և կարգի հրավիրենք ընկ. Թելմանին, վորն, իր թե, իր ճառերից մեկում հանդես ե յե-կել մի քննադատությամբ ընկ. Բուխարինի։ ՎԻ կոնդրեսում տված գեկուցման դեմ։ ՄԵՆՔ; իհարկե, չեյինք կարող համա-ձայնել ընկ. Բուխարինի հետ, մեր ձեռքում չունենալով ընկ. Բուխարինի պահանջը հաստատող բացարձակապես վոչ մի փաս-տաթուղթ։ Ընկ. Բուխարինը խոստացավ փաստաթղթեր ներկա-յացնել ՆԵՐՄԱՆԻ ու ԹԵԼՄԱՆԻ դեմ։ Սակայն վոչ մի փաստա-թուղթ նա չներկայացրեց։ Փաստաթղթերի փոխարեն նա Համկե

ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԾՈՎ

պատվիրակության անդամներին ուղարկեց ընկ. Եմբեր-Դրոյի հայտնի ճառը Կոմինտերնի Գործկոմի քաղաքարտուղարության մեջ, հենց այն ճառը, վորը հետո Կոմինտերնի Գործկոմի նախագահությունը վորակեց վորպես ոպորտունիստական ճառ: Եմբեր-Դրոյի ճառն ուղարկելով Համեկ պատվիրակության անդամներին ճառը հանձնարերելով այն վորպես նյութ ընկ. Թելմանի դեմ՝ ըին ու հանձնարերելով այն վորպես նյութ ընկ. Բուժմանի դեմ՝ ընկ. Բուժարինը ցանկանում եր ապացուցել ընկ. Նեյմանին հետ ընկ. Բուժարինը ցանկանում եր ապացուցել ընկ. Թելմանին հետ կանչելու և ընկ. Թելմանին կարգի հրամակությունը իր պահանջի կանչելու և ընկ. Իսկ իրականում նա դրանով ապացուցեց, վոր ինչը համերաշխ ե ընկ. Եմբեր-Դրոյի հետ, վորի դերքը Կոմինտերնի Գործկոմն ուղարտունիստական դիրք և համարում:

Ահա, ընկերներ, Կոմինտերնի հարցերի վերաբերյալ մեր տարածայնությունների գլխավոր կետերը:

Ընկ. Բուժարինը կարծում է, վոր պայքար մղելով աջ թեքան ու նրա նկատմամբ յեղած հաշտվողականության դեմ Կոմինտերնի սեկցիաներում, մաքրելով գերմանական ու չեխո-սլովակյան կոմկուսակցությունները սոցիալ-դեմոկրատական տարրերից ու տրադիցիաներից, կոմկուսակցություններից դուրս նետելով Բրանդերներին ու Տալհայմերներին՝ մենք հենց դրանով են «քայլայում ենք» Կոմինտերնը, «կործանում ենք» Կոմինտերնը: Իսկ մենք, ընդհակառակը, կարծում ենք, վոր այդպիսի քաղաքականություն կիրառելով ու սրելով հարցն աջ թեքման և նրա քականություն հաշտվողականության դեմ՝ մենք ամենամարդում ենք Կոմինտերնը, այն մաքրում ենք ոպորտունիստներացնում ենք Կոմինտերնը, այն մաքրում ենք ոպորտունիստներից, բոլշևիկացնում ենք նրա սեկցիաները և ողնում ենք կոմինտերներին, վոր բանվոր դասակարգը: Պատրաստեն գալիք հեղափոխական մարտերին:

Դուք տեսնում եք, վոր սրտնք հասարակ յերանդներ չեն համեկ կե-ի շարքերում, այլ բավական լուրջ տարածայնություններ Կոմինտերնի քաղաքականության արմատական հարցերի վերաբերյալ:

Սրանից առաջ յես խոսեցի մեր յերկրում յեղած դասակարգային տեղաշարժերի ու դասակարգային կովկ մասին: Յես ասացի, վոր Բուժարինի խումբը վարակված ե կուրությամբ և չի տեսնում այդ տեղաշարժերը, չի ըմբունում կուսակցության նոր խնդիրները: Յես ասացի, վոր այս հողի վրա նոր ոպորդիցիայի մոտ ծագել են գլխակորուսություն, յերկյուղ դժվարություններից, նրանց հանդեպ փաս հայտարարելու պատրաստականություն: Չի կարելի ասել, թե նոր ոպորդիցիայի այս սխաները յերկնքից են ընկել: Ընդհակառակը, նրանք կապված են զարգացման այն շրջանի հետ, վորն արդեն անցել ենք և վորը կոչվում ե ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջան, յերբ շինարարությունն ընթանում եր խաղաղ ճանապարհով, այսպես ասած՝ ինքնահօսի կարգով, յերբ դեռևս չկային դասակարգային այն տեղաշարժերը, վորոնք կան այժմ, յերբ գեռևս չկար դասակարգային կովկ այս սրումը, վոր մենք դեռ ենք այժմ: Բայց այժմ մեզանում զարգացման մի նոր շրջան ե, վորը տարրեր ե հին ժամանակաշրջանից, վերականգնման ժամանակաշրջանից: Այժմ մեզանում շինարարության նոր ժամանակաշրջան ե, ամբողջ ժողովրդական տնտեսությունը սոցիալիզմի բաղայի վրա վերակառացելու ժամանակաշրջան: Այս նոր ժամանակաշրջանն առաջցնում ե դասակարգային նոր տեղաշարժեր, դասակարգային կովկ սրում: Նա պահանջում ե պայքարի նոր յեղանակներ, մեր ուժերի վերախմբավորում, մեր բոլոր կազմակերպությունների բարելավում ու ամրացում: Ընկ. Բուժարինի խմբի դժբախտությունն ել հենց այն է, վոր նա ապրում ե անցյալում, նա չի տեսնում այս նոր ժամանակաշրջանի բնորոշ առանձնահատկությունները և չի ըմբռնում պայքարի նոր յեղանակների անհրաժեշտությունը: Այստե-

դից՝ նրա կուրությունը, գլխակորուսությունը, խուճապը դժվարությունների հանդեպ:

ա) ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՎԻ ՄԱՍԻՆ

Վա՞րն է ընկ. Բուխարինի խմբի այդ կուրության ու այդ գլխակորուսության թեորիական հիմունքն ընկ. Բուխարինի սխալ, վոչ-մարզափառական մոտեցումն ե մեր յերկրում մղվող դասակարգային կոմի հարցին: Յես նկատի ունեմ ընկ. Բուխարինի վոչ-մարզափառական թեորիան սոցիալիզմի մեջ կուլակության ներածելու ժաման, պրոլետարիատի դիկտատորայի պայմաններում մղվող դասակարգային կոմի մեխանիկան չըմբռնելը:

Այստեղ միքանի անդամ քաղվածորեն բերին ընկ. Բուխարինի «Սոցիալիզմի ուղին» գրքույկի հայտնի տեղը սոցիալիզմի մեջ կուլակի ներածելու մասին: Բայց այդ տեղից մեջբերումներ առին այստեղ՝ միքանի բացթողումներով: Թույլ տվեք այն ամբողջությամբ մեջ բերել: Այս անհրաժեշտ ե, ընկերնե՛ր, վօրպեսպի ցուցադրենք ընկ. Բուխարինի նահանջի ամբողջ իրությունը դասակարգային կոմի մարքսիստական թեորիայից: Հսեցե՛ք.

«Մեր կոռպերատիվ գյուղացիական կաղմակերպությունների հիմնական ցանցը բաղկացած ե լինելու վո՛չ թե կուլակային, այլ «աշխատավորական» տիպի կոռպերատիվ բջիջներից, —բջիջներ, վորոնք ներածում են մեր համապետական որդանների սխատմի մեջ և այդ ձանապարհով գատնում սոցիալիստական տնտեսության միասնական շղթայի ոգովիները: Մյուս կողմից, կուլակային կոռպերատիվ բները նիշանույն կերպ բանկերի և այլնի միջոցով ներանելու յեն նույն այդ սիրտնմի մեջ. բայց նրանք վորոշ չափով ուսարածին մարմարմին են լինելու, որինակ՝ կոնցեսիոն ձեռնարկությունների նման»¹:

Մեջբերելով ընկ. Բուխարինի բրոշյուրից այս տեղը՝ միքանի ընկերներ, չգիտես թե ինչու, բաց ելին թողնում վերջին Փրազը կոնցեսիոնների մասին: Ընկ. Ռողիսը, ըստ յերևութին,

1 Ե. Բուխարին, «Սոցիալիզմի ուղին ու բանվորագյուղացիական գումար», էջ 49: Ընդդումն իմն ե: Ի. Ատ.:

ցանկանալով ողնել ընկ. Բուխարինին՝ ոգտվեց դրանից ու այս-տեղ տեղից բղավում եր, թե Բուխարինին աղավաղում են: Մինչդեռ ամբողջ ցիտատի աղը հնոց վերջին, կոնցեսիոններներին վերաբերող Փրազի մեջ ե: Վորովչեակ յեթե կոնցեսիոնները միենույն շարքն են դասվում կուլակների հետ, իսկ կուլակները ներածում են սոցիալիզմի մեջ, ապա ի՞նչ ե ստացվում որանից: Արանից միայն մի բան ե ստացվում, հենց այն, վոր կոնցեսիոններները նույնպես ներածում են սոցիալիզմի մեջ, վոր վո՛չ միայն կուլակները, այլև կոնցեսիոններները ներածում են սոցիալիզմի մեջ: (Ընդհանուր ծիծաղ):

Ահա թե սրանից ինչ ե ստացվում, ընկ. Ռողիս:

Ռողիս: Ընկ. Բուխարինի մոտ ասված ե՝ «ոտարածին մարմին»:

Ստալին: Բուխարինի մոտ, ընկ. Ռողիս, ասված ե վո՛չ թե «ոտարածին մարմին», այլ «վորոշ չափով ոտարածին մարմին»: Հետեապես, կուլակներն ու կոնցեսիոններները սոցիալիզմի սիստեմի մեջ «վորոշ չափով» ոտարածին մարմին են: Բայց ընկ. Բուխարինի սխալն ել հենց այն ե, վոր կուլակներն ու կոնցեսիոններները «վորոշ չափով» ոտարածին մարմին լինելով՝ այնուամենայնիվ ներածում են սոցիալիզմի մեջ: Ահա թե ինչպիսի անհեթեթության ե հասցնում ընկ. Բուխարինի թեորիան: Քաղաքի ու գյուղի կապիտալիստներ, կուլակներ ու կոնցեսիոններներ, վորոնք սոցիալիզմի մեջ են ներածում, —ահա թե ինչպիսի հիմնարության ե հասցըել ընկ. Բուխարինին իր ասածը: Վո՛չ, ընկերնե՛ր, մեղ այդպիսի «սոցիալիզմ» հարկավոր չե: Ընկ. Բուխարինը թող իրեն վերցնի այն:

Մինչև այժմ մենք, մարքսիստ-լենինիստներս, կարծել ենք, թե մի կողմից՝ քաղաքի ու գյուղի կապիտալիստների և մյուս կողմից՝ բանվոր դասակարգի միջև շահերի անհաջողելի հակադրություն գոյություն ունի: Հենց սրա վրա յե հիմնվում դասակարգային կոմի մարքսիստական թեորիան: Իսկ այժմ, համաձայն Բուխարինի թեորիայի, թե կապիտալիստները խաղաղորդներն ներանելու յեն սոցիալիզմի մեջ, այս ամենը գլխիվայր ե չուռ գալիս, շահագործողների ու շահագործվողների դասակարգային շահերի անհաշտ հակադրությունն անհետանում ե, շահագորդողները ներածում են սոցիալիզմի մեջ:

Ռողիս: Այդ ճիշտ չե, պրոլետարիատի դիկտատորան յենթագրվում ե:

Ստալին: Բայց պղողետարիատի դիկտատուրան դասակարգա-
յին կովի ամենասուր ձևն է:

Ռոզիտ: Ահա բանն ել հենց այդ է:

Ստալին: Իսկ Բուխարինի մոտ դուքս ե դալիս, վոր կա-
պիտալիստները ներածում են պղողետարիատի հենց այդ դիկտա-
տուրայի մեջ: Ել ի՞նչպես չեք հասկանում դուք այս բանը, ըն-
կեր Ռոզիտ: Ել ո՞ւմ դեմ պետք ե պայքար մղել, ել ո՞ւմ դեմ
պետք ե դասակարգային կովի ամենասուր ձևը մղել, յեթե քա-
ղաքի ու գյուղի կապիտալիստները ներածում են պղողետարիատի
դիկտատուրայի սիստեմի մեջ: Պղողետարիատի դիկտատուրան
նրա համար ե պետք, վոր անհաշտ պայքար մղենք կապիտալիս-
տական տարրերի դեմ, նրա համար ե պետք, վոր ճնշենք բուր-
ժուազիային ու կապիտալիզմն արժամատախիլ անենք: Բայց յեթե
քաղաքի ու գյուղի կապիտալիստները, յեթե կուլտակն ու կոնցե-
սիոները ներածում են սոցիալիզմի մեջ, սրանից հետո ընդ-
հանրապես հարկավո՞ր ե արդյոք պղողետարիատի դիկտատու-
րան, և յեթե հարկավոր ե, ապա վո՞ր դասակարգին ճնշելու հա-
մար:

Ռոզիտ: Բանն ել հենց այն է, վոր ներածումը Բուխարինի
մոտ դասակարգային կովի ե յենթադրում:

Ստալին: Յես տեսնում եմ, վոր ընկ. Ռոզիտը յերդվել ե
ծառայություն մատուցել ընկ. Բուխարինին: Բայց նրա ծառա-
յությունն արջի ծառայություն ե դուքս դալիս, վորովհետեւ նա,
ցանկանալով փրկել Բուխարինին՝ իրաղես ջրահեղձ ե անում
նրան իսպառ: Չուր չե ասված, վոր «ծառայակամ արջը թշնա-
մուց ավելի վտանգավոր ե» (ընդհանուր քրիզ):

Յերկուսից մեկը. կամ շահերի անհաշտելի հակադրություն
կա կապիտալիստների դասակարգի ու իշխանության հասած և
իրենց դիկտատուրան կազմակերպած բանվորների դասակարգի
միջև, կամ շահերի այդ հակադրությունը չկա, և այն ժամա-
նակ մի բան ե մնում—դասակարգային շահերի ներդաշնակու-
թյուն հայտարարել:

Կամ դասակարգերի կովի մարքսյան թեորիա, կամ սոցիա-
լիզմի մեջ կապիտալիստների ներածելու թեորիա: Կամ դասա-
կարգային շահերի անհաշտելի հակադրություն, կամ դասակար-
գային շահերի ներդաշնակության թեորիա: Յերկուսից մեկը:

Դեռ կարելի յե հասկանալ Բրենտանոյի կամ Սիլնեյ Վերբք
ախաղի «սոցիալիստներին», վորոնք քարոզում են սոցիալիզմի ներ-

աճումը կապիտալիզմի մեջ ու կապիտալիզմին՝ սոցիալիզմի մեջ,
վորովհետեւ այդ «սոցիալիստներն» իրապես անտիսոցիալիստներ
են, բուրժուական լիբերալներ: Բայց չի կարելի հասկանալ այ-
մարդուն, վորը ցանկանում ե մարքսիստ լինել ու դրա հետ մեկ-
տեղ սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներածելու թեորիա յե
քարոզում:

Ընկ. Բուխարինն իր ճառում փորձ արեց սոցիալիզմի մեջ
կուլտակների ներածելու թեորիան ամբազնութել՝ վկայակոչելով Լե-
նինի հայտնի ցիտատը: Ընդամենը նա պնդում է, թե Լենինը
ենց նույնին ե ասում, ինչ վոր Բուխարինը: Այդ ծիշտ չե, ըն-
կերներ: Այդ կոպիտ ու անթույլատրելի զրպարտություն ե Լե-
նինի նկատմամբ: Ահա Լենինից առնված այդ ցիտատի տեքստը.

«Իհարկե, մեր խորհրդային հանրապետության մեջ սո-
ցիալական հասարակակարգը հիմնված է յերկու դասակար-
գի՝ բանվորների ու գյուղացիների գործակցության վրա,
վորին այժմ վորոշ պայմաններով թույլ ե տրված մասնակ-
ցելու նաև «նեպմաններին», այսինքն՝ բուրժուազիային»¹:

Դուք տեսնում եք, վոր այստեղ վոչ մի խոսք չկա սոցիալիզ-
մի մեջ կապիտալիստների ներածելու մասին: Այստեղ խոսվում
է միայն այն մասին, վոր մենք «թույլատրել ենք», վոր բան-
վորներին ու գյուղացիներին «վորոշ պայմաններով» գործակցեն
նաև նեպմանները, այսինքն բուրժուազիան: Ի՞նչ ե նշանակում
այս: Նշանակում ե այս արդյոք, վոր մենք հենց գրանով թույ-
լատրել ենք սոցիալիզմի մեջ նեպմանների ներածելու հարավու-
րությունը: Իհարկե, չի նշանակում: Լենինից բերված ցիտատն
այսպես կարող են մեկնարանել միայն ամոթը կորցրած մարդիկ: Այս լոկ այն ե նշանակում, վոր մենք թույլատրելին այժմ չենք
վոչնչացնում, վոր մենք նրան այժմ կոնֆինկացիայի չենք յեն-
թարկում, այլ թույլատրում ենք նրա գոյությունը վորոշ պայ-
մաններով, այսինքն՝ պղողետարիատի դիկտատուրայի որենքնե-
րին անդամանուրեն յենթարկվելու դեպքում, այսինքն՝ կապի-
տալիստներին հարածուն կերպով սահմանափակելու դեպքում,
սահմանափակում, վորի նպատակն ե նրանց աստիճանաբար ար-
տամզել ժողովրդատնեսական կյանքից: Կարելի՞ յե արդյոք
կենսագործել կապիտալիստների արտամզումը և կապիտալիզմի
արժամաների վոչնչացնումը՝ առանց կատաղի դասակարգային

1 Լենին, ինչպես վերակազմենք Բանդյուզտեսչությունը: Յերկեր,
հ. XXVII, էջ 405:

կովի : Վո՛չ, չի կարելի : Կարելի՞ յե արդյոք վոչնչացնել դասակարգերը՝ սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներածելու պրակտիկայի ու թեորիայի առկայությամբ : Վո՛չ, չի կարելի : Այդպիսի թեորիան ու պրակտիկան կարող էն միայն արմատավորել ու հավերժացնել դասակարգերը, վորովչետև նա, այդ թեորիան, հակասում ե դասակարգային կովի թեորիային : Ե՛, իսկ լենինից բերված ցիտատն ամբողջապես ու լիովին խարսխվում ե պրոլետարիատի գիկտատուրայի պայմաններում մզվող դասակարգային կովի մարքսիստական թեորիայի վրա : Ի՞նչ ընդհանուր բան կարող ե լինել սոցիալիզմի մեջ կուլակի ներածելու վերաբերյալ Բուխարինի թեորիայի ու Լենինի թեորիայի միջև գիկտատուրայի՝ վորպես դասակարգային կատաղի կովի՝ մասին : Պարզ է, վոր այսուղ ընդհանուր վոչնչ չի կարող լինել : Ընկ . Բուխարինը կարծում է, վոր պրոլետարիատի գիկտատուրայի որով դասակարգային կովիը պետք ե մարի ու լիկվիդացիայի յենքարիլի նրա համար, վոր դասակարգերի վոչնչացում ստացվի : Իսկ լենինը, ընդհակառակը, ուսուցանում է, վոր դասակարգերը կարող են վոչնչացվել միայն համար դասակարգային կովի միջոցով, վորը պրոլետարիատի գիկտատուրայի պայմաններում ե՛լ ավելի կատաղի յե դասում, քան մինչև պրոլետարիատի գիկտատուրան :

«Դասակարգերի վոչնչացումը, —ասում ե Լենինը, —յերկարատե, դժվարին, համառ դասակարգային կովի դործ է, կովի, վորը կարվիտալի իշխանության տապալումից հետո, բուրժուական պետության կործանումից հետո, պրոլետարիատի գիկտատուրայի հաստատումից հետո չ ի չ ուն ու մ (ինչպես հին սոցիալիզմի և հին սոցիալ-դեմոկրատիայի գոեհիկներն են յերեակայում), այլ միայն իր ձեւերն ե փոխում, չատ կողմերով ե՛լ ավելի կատաղի դասուլով»¹ : Ահա թե ինչ ե ասում լենինը դասակարգերի վոչնչացման մասին :

Դասակարգերի վոչնչացում պրոլետարիատի կատաղի դասակարգային կովի միջոցով, —այս ե լենինի Փորմուլան :

Դասակարգերի վոչնչացում դասակարգային կովի մարելու ու սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներանելու միջոցով, —այս ընկ . Բուխարինի Փորմուլան :

¹ Լենին, Վողջույն հունդարական բանվորներին : Յերկեր, հ. ՀՀ 315:

Ի՞նչ ընդհանուր բան կարող ե լինել այս յերկու գործուաների միջև : Պարզ է, վոր նրանց միջև վոչ մի ընդհանուր բան չկա և չի կարող լինել :

Այսպիսով սոցիալիզմի մեջ կուլակների ներածելու բուխարինյան թեորիան նահանջ ե դասակարգային կովի մարքս-լենինյան թեորիայից : Դա կաթեղեր-սոցիալիզմի թեորիային մոտենալ է :

Սրա մեջ ե ընկ . Բուխարինի ու նրա բարեկամների բոլոր սխալների հիմքը :

Կարող են ասել, թե չարժե յերկար ընդարձակաբանել սոցիալիզմի մեջ կուլակների ներածելու բուխարինյան թեորիայի մասին, վորովչետև նա ինքն ե խոսում, —և վո՛չ միայն խոսում ե, այլ ազաղակում, —ընկ . Բուխարինի գեմ : Այդ ճիշտ չե, ընկերնե՛ր : Քանի դեռ այդ թեորիան ծածկոցի տակ եր, կարելի յեր նրա վրա ուշադրություն չփարձնել-քի՛չ հիմարություններ կան արդյոք զանազան ընկերների զրվածքներում . մենք այլպես ել վարվում եյինք մինչև վերջին ժամանակներս : Բայց վերջերս իւրադրությունը փոքր ինչ փոխվեց : Մանր-բուրժուական տարերքը, վոր ծավալվեց վերջին տարիներում, սկսեց վոգենչնել այդ հակամարքսիստական թեորիան՝ տալով նրան ակտուալ բնույթ : Այժմ արդեն չի կարելի ասել, թե նա ծածկոցի տակ է : Այժմ նա, ընկ . Բուխարինի այդ տարրորինակ թեորիան, հավակնություն ունի մեր կուսակցության մեջ յեղած աջ թեքման դրույթ, ոպորտունիզմի գրոշը դառնալու : Ուստի մենք արդեն չենք կարող այդ թեորիայի կողքով անցնել : Ուստի մենք պարտավոր ենք ջարդություր անել այն վորպես սխալ ու վնասակար թեորիա՝ նրա համար, վորպեսզի մեր կուսակցական ընկերների համար հեշտացնենք աջ թեքման դեմ պայքարելը :

Բ) ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՐՎԻ ՍՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկ . Բուխարինի յերկրորդ սխալը, վոր բղխում է նրա առաջին սխալից, անձիչտ, վոչ-մարքսիստական մոտեցումն ե դասակարգային կովի սրման հարցին, կապիտալիստական տարրերի կողմից խորհրդային իշխանության սոցիալիստական քաղաքականության ցույց արվող դիմադրության ուժեղացման հարցին : Խոսքն ինչի՞ մասին ե այսուել : Արդյոք այն մասին չե՞ , վոր կապիտալիստական տարրերն ավելի արագ են աճում, քան մեր տնտեսության սոցիալիստական սեկտորը, և վոր, դրա չնորհիլ,

նրանք ուժեղացնում են իրենց դիմագրությունը, խարիսկելով սոցիալիստական շինարարությունը։ Վո՛չ, դրա մասին չե։ Յեվ ընդունին ճիշտ ել չե, թե կապիտալիստական տարրերը սոցիալիստական սեկտորից իր թե ավելի արագ են աճում։ Յեթե այդ տական մեկտեղ լիներ, ապա սոցիալիստական շինարարությունն արդեն ճիշտ լիներ, ապա սոցիալիստական շինարարությունն արդեն ճիշտ լիներին լիներ։ Խոսքն այն մասին ե, վոր սոցիալիզմը հաջողությում և կապիտալիստական տարրերից ավելի արագ և վրա, սոցիալիզմը կապիտալիստական տարրերի տեսակամուռ, դրա հետեւանքով կապիտալիստական տարրերի տեսակամուռ, դրա կշիռն ընկնում ե, և հենց այն պատճառով, վոր կապիտալիստական տարրերի տեսակարար կշիռն ընկնում ե, կապիտալիստական տարրերն զգում են մահացու վտանգը և ուժեղացնում միստական տարրերն զգում են մահացու վտանգը և ուժեղացնում իրենց դիմագրությունը։ Իսկ իրենց դիմագրությունն ուժեղն իրենց դիմագրությունը նրանք գեռես ունեն վո՛չ միայն այն դաշնելու հնարավորություն նրանք գեռես ունեն վո՛չ միայն այն պատճառով, վոր համաշխարհային կապիտալիզմը նրանց ողնությունն ե ցույց տալիս, այլև այն պատճառով, վոր, չնայած իրենց տեսակարար կշռի անկմանը, չնայած սոցիալիզմի աճման համեմատությամբ նրանց հարաբերական աճման իջնելուն, կապիտալիստական տարրերի բացարձակ աճում այնուամենայի ավտուալիստական տարրերի աճուրդը, և գաղաքայի յեղին կույտը համարական տառեղի յեղին ունենում, և գան նրանց վորոշ հնարավորություն և տառեղի յեղին ունենում, կույտակելու, վորպեսզի դիմագրեն սոցիալիզմի աճմանը։ Հենց այս հիման վրա յե, վոր գարգացման տվյալ պայմաններում, ուժերի հարաբերակցության տվյալ պայմաններում, ծագում են գտակարգային կույտ սրումը և քաղաքի ու գյուղի ծագում են գտակարգային մուտքությունը մուտքությունը։ Ծնկ կապիտալիստական տարրերի սիստեմ այն ե, վոր նրանք այս պարզ ու ակներև ճշմարտությունը չեն ըմբռնում։ Նրանց սիստեմ այն ե, վոր նրանք գործին մուտքությունը են վո՛չ թե մարքսիստութեն, այլ քաղեննիորեն՝ փորձելով զասակարգային կույտ սրումը բացատրել ամեն տեսակի պատճական պատճառներով, ասենք, բացատրել ամոր ապարատի անդեռությամբ։ Տեղական ընկերությունների ապարատի գործությունը ուժեղ ապարատի անդեռությամբ։ Դուքս ե գալիս, այլ մեր ապարատի անդեռությամբ։ Դուքս ե գալիս, վոր մինչեւ անդեռությունը մասսայական վնասարարության յերեան գալը Շախվոր մինչեւ մասսայական վնասարարության յերեան գալու, իսկ հետո, մասսայական տիի ըրջանում մեր ապարատը լալին եր, իսկ հետո, մասսայական վնասարարության յերեան դալու մոմենտին, ապարատը, զգիտես մինչեւ, բոլորովին անպետքացավ։ Դուքս ե գալիս, վոր մինչեւ անդեռությունը մեր մթերություններն ինքնահոսով ելին ընթանում ե ցյալ տարի, յերբ մթերություններն առանձին սրում չկար մեղանում, մեր գտակարգային կույտ առանձին սրում չկար մեղանում, մեր կապիտալիստությունները տեղերում լալ ելին կամ մինչեւ իսկ իդեալական, իսկ անցյալ տարվանից սկսած, յերբ կուլակության դիմագրությունն առանձնապես սուր ձեւեր ընդունեց, մեր կապիտալիստությունները հանկարծ վատ ու բոլորովին անպետք դարձան։ Աս բացատրություն չե, այլ բացատրության ծաղրանք։ Աս դիտություն չե, այլ գրքացություն։

Աչա, որինակ, ընկ. Բուխարինի «Սոցիալիզմի ուղին» ըրուցյունը մի ցիտատ, վորը միանդամայն վո՛չ մարքսիստական մուցությունը մի ցիտատ, վորը միանդամայն հարցին։

«Մերթ այստեղ, մերթ այստեղ զասակարգային կույտը սրում և ցուցադրում զասակարգային կույտը սրում և իր նախկին արտահայտություններով, գյուղում բռնկվում է իր նախկին արտահայտություններով, ընդուրում այդ սրումը սովորաբար կուլակային տարրերի ընդուրում այդ սրումը սովորաբար

են առաջացնում։ Յերբ, որինակ, կուլակները կամ ուրիշի հայվին հարստացող ու խորհրդային իշխանության որդանների կուլակած մարդկի սկսում են կրակել գյուղթզթակիցների բրա, —սա զասակարգային կավի արտահայտություն և ամենա վրա, —սա զասակարգային կավի արտահայտություն և ամենասուր ձևով։ (Սա սխալ ե, վորովհետեւ կավի ամենասուր ձևով մեր կավի ամենասուր ձևով։ Սակայն այսպիսի ձեն ապատամ բությունն ե, ի. Ստալին)։ Սակայն այսպիսի գեղագույքը կավի ամենասուր ձևով բությունն ե, վորովհետեւ կավի ամենասուր ձևով։ Ֆանի այդ ապարատը բարելավվի, քանի խորհրդային իշխանության բոլոր սուրբն բջիջներն ամրանան, քանի տեղային գյուղական կուլակական սուրբն կավի ամենասուր ձևով բությունն ե, այնքան այդ տեսակի յերկույթները բելավիլի ու ուժեղանան, այնքան այդ տեսակի յերկույթները, ինչպես այդ միանդամայն ակներն ե, այվելի ու ավելի բը, ինչպես այդ միանդամայն ակներն ե, այվելի հազվագեց կղապահ կղապահ անապահ անապահ, վերջիվերջո անհետ կշխանան։

«վերացնել» պետությունը, «պայմենելը» (s p e n g e n) այն,
ինչպես մի տեղ արտահայտվում ե ընկ. Նոտա Bene-ն, այս
ինչպես մի տեղ արտահայտվում ե ընկ. Նոտա Bene-ն, այս
հայացքը սիսալար վերաբերով սոցիալիստներին: Սոցիա-
լիստները—հեղինակը ցավոք սրտի խիստ անլրիվ ե մեջ րե-
րել ենդեւսի սրան վերաբերող խոսքերը—ընդունում են պե-
տության մահացումը, «աստիճանական» «նիրհումը» բուր-
ժուազիային եքսպրոլիիտացիայի յենթարկելուց հետո»...

«Դեպի պետությունը յեղած «սկզբունքային թշնամու-
թյունն» «ընդգծելու» համար հարկավոր ե խկացես «պարզ»
ըմբանել այն, իսկ հեղինակի մոտ հենց պարզություն չկա:
իսկ «պետականության արմատներին» վերաբերող Փըազն
արդեն բոլորովին խճճված Փըազ ե, վոչ մարքսիստական և

վոչսոցիալիստական Փրադ է: Վո՛չ թե «պետականությունն» և ընդհարվել պետականության ժխտման հետ, այլ ոպորտունիստական քաղաքականությունն է (այսինքն՝ ոպորտունիստական, ոճֆորմիստական, բուրժուական վերաբերմունքը գեղի պետությունը) ընդհարվել հեղափոխական սոցիալ-դեմոկրատական քաղաքականության հետ (այսինքն՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատական վերաբերմունքի հետ դեպի բուրժուական պետությունը և դեպի պետության ողտագործութը բուրժուազիայի դեմ՝ սրան տապալելու համար): Մրանք բոլորովին, բոլորովին տարբեր բաներ են»¹:

Թվում ե, թե պարզ է, թե այստեղ բանն ինչումն է, և թե ընկ. Բուխարինն ինչ կիսա-անարխիստական ցեխաջուր է ընկել: Ստեն: Լենինն այն ժամանակ դեռևս ծավալուն կերպով չերձեակերպել պետության «պայթեցման» անհրաժշտությունը: Բուխարինը, անարխիստական սխալներ դորձելով, մոտենում եր այդ հարցի ձեռակերպմանը:

Ստալին: Վո՛չ, ընկ. Ստեն, այժմ խոսքն այդ մասին չե. Խոսքն այն մասին է, թե ընդհանրապես ինչ վերաբերմունք և ցույց տրվում պետությանը, խոսքն այն մասին է, վոր, Բուխարինի կարծիքով, բանվոր դասակարգը պետք է սկզբունքորեն թշնամի լինի ամեն մի պետության, այդ թվում նաև բանվոր դասակարգի պետությանը:

Ստեն: Լենինն այն ժամանակ խոսում եր միայն պետության ողտագործման մասին, ընկ. Բուխարինին քննադատելիս վոչինչ չխոսելով «պայթեցման» մասին:

Ստալին: Սիալվում եք, ընկ. Ստեն: Համարձակվում եմ հավաստիացնել ձեզ, վոր այստեղ խոսքն այն մասին է, վոր բանվորները պետք ե ընդգծեն, Բուխարինի (և անարխիստների) կարծիքով, իրենց սկզբունքային թշնամությունը դեպի ամեն մի պետություն, հետևաբար նաև դեպի անցման ժամանակաշրջանի պետությունը, դեպի բանվոր դասակարգի պետությունը: Ապա մեկ փորձեցեք հասկացնել մեր բանվորներին, վոր բանվոր դասակարգը սկզբունքային թշնամությամբ պետք ե տողորդի դեպի պրոլետարական դիկտուրան, վորը չե՞ վոր նույնական պետություն է: Բուխարինի դիրքը, վոր շարադրված է «Յերիստասարդության ինտերնացիոնալ»-ում գետեղված նրա հոգվածում,

¹ Լենին, հ. XIX, էջ 296, «Յերիստասարդության ինտերնացիոնալ» («Ալ-Տերնացիոնալ մոլոդежի»):

պետության ժխտման դիրք ե մի ժամանակաշրջանում, վորն անցաման ժամանակաշրջան է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ: Ընկ. Բուխարինի տեսողությունից այստեղ վրիպել ե մի «մանրունք», այն ե՝ նրա տեսողությունից վրիպել ե մի ամբողջ անցման ժամանակաշրջան, յերբ բանվոր դասակարգը չի կարող յուլագնալ - առանց իր սեփական պետության, յեթե նա իսկապես ուղղում ե ձնշել բուրժուազիային ու սոցիալիզմ՝ կառուցել: Այս առաջին: Յերկրորդ, ճիշտ չե, թե ընկ. Լենինն այն ժամանակի իր քննադատության մեջ չի շոշափել ընդհանրապես պետության «պայթեցման», «վերացման» թեորիան: Լենինը վո՛չ միայն շոշափել ե այդ թեորիան, ինչպես այդ յերկում ե վերը իմ բերած ցիտատներից, այլև նա խիստ քննադատել ել ե այն վորպես անարխիստական թեորիա՝ նրան հակադրելով բուրժուազիային տապակելուց հետո նոր պետություն, այն ե՝ պրոլետարական դիկտուրայի պետություն ստեղծելու թեորիան: Վերջապես, պետության «պայթեցման» անարխիստական թեորիան չի կարելի շփոթել բուրժուական-պետական մեքենան «չարգելու», «փշրելու» վերաբերյալ մարքսիստական թեորիայի հետ: Ընկերներից վոմանք հակամետ են շփոթելու այս յերկու տարբեր հասկացողությունները, կարծելով, թե դրանք միևնույն մտքի արտահայտություններ են: Բայց այդ սխալ է: Բոլորովին սխալ է, ընկերներ: Լենինը հենց բուրժուական-պետական մեքենան «չարգելու» մարքսիստական թեորիայից եր յելնում, յերբ նա քննադատում եր ընդհանրապես պետության «պայթեցման» ու «վերացման» անարխիստական թեորիան;

Թերեւս ավելորդ չի լինի, յեթե ավելի պարզություն մտցնելու նպատակով յես այստեղ բերեմ ընկ. Լենինի ձեռագրերից մեկը պետության մասին, վորը, ինչպես յերկում ե բոլոր նշաններից, զրված ե 1916 թվականի վերջին կամ 1917 թվականի սկզբին (մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը): Այդ ձեռագրից կարելի յե հեշտությամբ տեսնել, վոր ա) պետության հարցում ընկ. Բուխարինի ունեցած կիսաանարխիստական սխալները քննադատելիս լենինը յելնում եր բուրժուական-պետական մեքենան «չարգելու» մարքսիստական թեորիայից, բ) վոր թե՛ն Բուխարինը, ըստ Լենինի արտահայտության, «ավելի մոտ է ձմգարտությանը, քան կառուցիլին», բայց, նա, այնուամենայնիվ, «կառուցկիականներին մերկացնելու փոխարեն՝ իր սխալներով ողնում ե նրանց»: Ահա այդ ձեռագրի տեքստը:

«Պետության վերաբերյալ հարցում չափազանց մեծ կա-
րևորություն ունի Ենգելսի նամակը Բերելին 1875 թ. մարտի
16/28-ին։
Ահա նրա ամենադլխավոր տեղն ամբողջությամբ։

«... Ազատ ժողովրդական պետությունը փոխարկվել
է ազատ պետության։ Բայ այդ բառերի վերականական
իմաստի՝ ազատ պետությունն այնպիսին է, վորտեղ պե-
տությունն ազատ է իր քաղաքացիների նկատմամբ, այ-
սինքն՝ բռնակալական կառավարությունն ունեցող պե-
տություն է։ Հարկավոր եր դեն զցել պետության վերա-
բերյալ այդ ամբողջ շաղակրատությունը, մանավանդ
կուտունայից հետո, վորն արդեն բուն իմաստով պետու-
թյան չեր։ «Ժողովրդական պետությունով» անարխիստ-
ներն ավելի քան բավականաչափ ծակում ենին մեր աչքը,
թեև արդեն Պրուգոնի գեմ ուղղած Մարքսի յերկը և
ազատ «Կոմունիստական մանիֆեստն» ուղղակի ասում
են, վոր սոցիալիստական հասարակարգ մտցնելով՝
պետությունն ինքնիրեն լուծվում է (sich auflöst) ու
պետությունն ինքնիրեն լուծվում է։ Քանի վոր պետությունը սոսկ անցողիկ հաս-
չանում։ Քանի վոր պետությունը սոսկ անցողիկ հաս-
չանում է, վորից հարկ է լինում ուղարկել պայքարի
տատություն և, վորից հարկ է լինում ուղարկել պայքարի
մեջ, հեղափոխության մեջ՝ իր հակառակորդներին
կան պետության մասին խոսելը զուտ անմտություն է.
Կան պետության մասին խոսելը զուտ անմտություն է.
Քանի գեռ պլոտետարիատը պետության կարիք ունի, նա
գրա կարիքն ունի վո՞չ թե պետության շահի համար,
այլ իր հակառակորդներին ննջելու շահի համար. իսկ
յերբ հետքավոր է լինում ազատության մասին խոսել,
այն ժամանակ պետությունն իբրև այդպիսին դադարում
է գոյություն ունենալուց։ Այս պատճառով մենք կառա-
գարկելինք պետություն բառի տեղ ամենուրեք դնել «Հա-
մայնք» (Gemeinwesen) բառը, գերմաներեն մի սքան-
չելի հեն բառ, վորը համապատասխանում է ֆրանսերեն
«կոմունա» բառին» (ընդդումն Ենգելսին է)։

Սա Մարքսի ու Ենգելսի մոտ, թերես, ամենառւշաղրավ-
ու հավանաբեն ամենակարուկ տեղն է, այսպես ասած՝ «պե-
տության դեմ»։

- (1) «Հարկավոր ե դեն դցել պետության վերաբերյալ
ամբողջ շաղակրատությունը»։
(2) «Կոմունան արդեն իսկական իմաստով պետություն-
չեր»։ (իսկ ի՞նչ եր։ Ակներեաբար՝ անցման ձև պետությու-
նից դեպի վոչպետությունը)։
(3) Անարխիստները բավական «ծակել են մեր աչքը»
(in die Zähne geworfen, բառացի՝ մեր զնչին են ավել) «ժո-
ղովրդական պետությունով» (ուրեմն Մարքսն ու Ենգելսն
ամաչում եյին իրենց գերմանացի բարեկամների այս ակըն-
հայտ սխալից. սակայն նրանք այն համարում եյին, և, հառ-
կանալի յե, այն ժամանակվա պայմաններին նայած ձիշտ-
կերպով, համարում եյին անհամեմատ պակաս կարևոր-
սիստ, քան անարխիստների սխալը։ Սա NB!!)
(4) Պետությունը «ինքնիրեն քայլայվում է («լուծվում
է») (Nota Bene) ու չքանում»... (հմմտ. ավելի ուշ՝ «մահա-
նում է») «սոցիալիստական հասարակակարգ մացնելով»...
(5) Պետությունը «ժամանակավոր հաստատություն» է,
վորը հարկավոր է «պայքարի մեջ, հեղափոխության մեջ»...
(հասկանալի յե, հարկավոր է պրոլետարիատին) ...
(6) Պետությունը հարկավոր է վո՞չ թե ազատության
համար, այլ պրոլետարիատի հակառակորդներին ննջելու
համար (Niederhaltung իսկապես ճշշումը չե, այլ ուստավ-
րացիայից հետ պահելը, հնազանդության մեջ պահելը)։
(7) Յերբ ազատություն լինի, այն ժամանակ պետու-
թյուն չի լինի։
(8) «Մենք (այսինքն՝ Ենգելսն ու Մարքսը) կառաջար-
կելինք «ամենուրեք» (ծրագրում) «պետության» փոխարեն-
ասել—«Համայնք» (Gemeinwesen), «կոմունա» !!!։
Այստեղից յերեսում է, թե Մարքսին ու Ենգելսին ինչպես
են գուհացըրել, ապականել վո՞չ միայն ոպորտունիստները՝
այլև կառուցկին։
Ոպորտունիստներն այս 8 ամենահարուստ մտքերից վոչ
մեկը չե՞ն հասկացել։
Նրանք վերցրել են ներկայի միայն պրակտիկ հարկավո-
րությունը—պլոտետարիատին սովորեցնելու, դաստիարակե-
լու համար, «զիշումներ կորզելու» համար ոգտագործել քա-
ղաքական պայքարը, ոգտագործել արդի պետությունը։ Սա
ձիշտ է (անարխիստների դեմ), բայց այս մարքսիզմի դեռևս

լոկ 1/100-ն ե, յէթե կարելի յե այսպես թվաբանորեն արտահայտվել:

Կառւցկին իր պրոպագանդիստական և առհասարակ հրապարակախոսական աշխատանքում բոլորովին քողարկել ե (թէ՞ մոռացել ե, թէ՞ չի հասկացել) Մարքսի 1, 2, 5, 6, 7, 8 կետերը և Մարքսի «Zerbrechen»-ը: (Պաննեկուկի հետ բանավիճելիս 1912 կամ 1913 թ. Կառւցկին (տե՛ս ստորեւ, եջ 45—47) այս հարցում արդեն բոլորովին դլորվել և ողորտունիզմի մեջ)...

Անարխիստներից մեղ տարբերում ե (α) պետության ողագործումն այժմ և (β) պրոլետարիատի հեղափոխության ժամանակ («պրոլետարիատի դիկտատուրա»)—կետեր, վորոնք կարեռագույնն են պրակտիկայի համար, իսկույն ևլթ: (Հենց զրա՞նք ե, վոր Բուխարինը մոռացել ե):

Ուղորտունիստներից—ավելի խորը, «ավելի համերժական» ճշմարտությունները (αα) պետության «ժամանակավոր» բնույթի մասին, (ββ) նրա մասին «շաղակրատելու» վնասակարության մասին այժմ, (γγ) պրոլետարիատի դիկտատուրայի վոչ-բոլորովին պետական բնույթի մասին, (δδ) պետության և ազատության հակառականության մասին, (εε) պետության փոխարեն «համայնքի» ավելի ճիշտ գաղափարի (հասկացողության, ծրագրային տերմինի) մասին, (ξξ) բյուրոկրատական-ռազմական մեքենան «ջարդելու» (Zerbrechen) մասին: Չմոռանանք մի բան ել, վոր Գերմանիայի բացահյուս ուղորտունիստները (Բերնշտայն, Կոլբ եւc.) պրոլետարիատի դիկտատուրան ուղղակի կերպով են ժխտում, իսկ պաշտոնական ծրագիրն ու կառւցկին՝ անուղղակի կերպով՝ ամենորյա աղիտացիայի մեջ լուելով նրա մասին ու հանդուրժելով Կոլբերի ու Բնկ. ռենեգատությունը:

1916 թ. ողոստոսին Բուխարինին զրված ե յեղել, «թո՛ղ պետության վերաբերյալ քո մտքերը հասունանան»: Իսկ նա, չքողնելով, վոր հասունանան, մամուլ խցկեց վորապես «Nota Bene», և այդ այնպես արեց, վոր կառւցկիականներին մերկացնելու փոխարեն իր սխալներով ոգնեց նրանց... Իսկ ըստ բանի եյության՝ Բուխարինն ավելի մոտ ե ճշմարտությանը քան Կառւցկին» (Ն. Լենին):

Այս ե պետության հարցի վերաբերյալ թեորիական վեճի համառոտ պատմությունը:

Թվում ե, թե բանը պարզ ե. Բուխարինը կիսաանարխիստական սխալներ ե թույլ տվել. ժամանակն ե ուղղելու այդ սխալները և առաջ դնալու Լենինի ճանապարհով: Բայց այսպես կարող են մտածել միայն լենինիստները: Բուխարինը, բանից դուրս ե գալիս, սրան համաձայն չե: Ընդհակառակը, նա պնդում է, թե սխալներ ե վո՛չ թե ինքը, այլ Լենինը, վոր վո՛չ թե ինքն ե գնացել կամ պետք ե զնա Լենինի ճանապարհով, այլ, ընդհակառակը, Լենինը հարկադրված յեղալ զնալու Բուխարինի հետքերով: Դուք չե՞ք հավատում, ընկերնե՞ր: Այդ զեղչքում լսեցեք շարունակությունը: Այս վեճերից հետո, վորոնք տեղի ունեցին 1916 թ., դրանից 9 տարի անց, վորոնց ընթացքում ընկ. Բուխարինը լուսություն եր պահպանում, Լենինի մահից մի տարի հետո, այն ե՝ 1925 թվականին «Իրավունքի հեղափոխություն» («Революция права») ժողովածուի մեջ ընկ. Բուխարինը ապօւմ ե «Իմպերիալիստական պետության թերթայի չուրջը» հողվածը, վորն իր ժամանակ «Սոցիալ-դեմոկրատի ժողովածուի» խմբագրությունը (այսինքն՝ Լենինը) տպագրության չեր ընդունել, և այդ հողվածի ծանոթագրության մեջ նա ուղղակի հայտարարում ե, վոր այդ վեճի մեջ իրավացի յե յեղել վո՛չ թե Լենինը, այլ ինքը՝ Բուխարինը: Այս կարող ե անհամատալի թվական բայց սա վաստ ե, ընկերնե՞ր:

Լսեցե՞ք այդ ծանոթագրության տեքստը.

«Յերխասարդության ինտերնացիոնալի» մեջ զետեղված հողվածի գեմ դիտողությամբ հանդես յեկավ Վ. Ի. Ն. (այսինքն՝ Լենինը): Ընթերցողները հետությամբ կտեսնեն, վոր յես չունեյի այն սխալը, վոր ինձ վերագրվում եր, վորովհետեւ յես հստակորեն տեսնում եյի պրոլետարիատի դիկտատուրայի անհամեշտությունը. մյուս կողմից, իլյիշի գիտողությունից յերևում ե, վոր նա այն ժամանակ սխալ եր վերաբերվում պեսության (հասկանալի յե, վոր բարժուատական) պայքեցման դրույթին, այս հարցը շփոքելով պրոլետարիատի դիկտատուրայի մահացման հարցի հետու: Գուցե հարկավոր եր, վոր յես այն ժամանակ ավելի զարգացնելի դիկտատուրայի թեման: Բայց ինձ արդարացնելու համար կարող եմ ասել, վոր այն ժամանակ բուրժուատական պետության մի այնպիսի համատարած սոցիալ-դեմոկրատական գովերդություն կար, վորի առկայությամբ բնական եր ամբողջ

1 Ընդդժուան իմն ե: Ի. Ստ.:

ուշադրությունը կենտրոնացնել այդ մեքենայի պայքեցման հարցի վրա:

Յերբ յես Ամերիկայից Ռուսաստան յեկա ու տեսա Նագեդա կոնսառանտինովնային (այդ մեր անլեզալ ՎԻ համագումարում եր, և այդ ժամանակ վ. ի թաղնլում եր), նրա առաջին խոսքերը սրբանք եյին. «Վ. ի. ինդրեց հազորդել ձեզ, վոր պետության հարցում նա այժմ տարածայնություններ չունի ձեզ հետ»: Այդ հարցով զբաղվելով՝ իլյիչը «պայթեցման» վերաբերմամբ յեկալ նույն յեզրակացություններին, բայց նա այդ թեման, իսկ այնուհետեւ նաև դիկտատուրայի վերաբերյալ ուսմունքն այնքան զարգացրեց, վոր թեորիական մտքի այդ ուղղությամբ կատարած զարգացման մեջ մի ամբողջ դարադրուխ ստեղծեց»²:

Ընկ. Բուխարինն այսպես է զրում Լենինի մասին նրա մահվանից մի տարի հետո:

Աչա ձեղ թերուս թեորիատիկի՝ հիպերտրոֆիայի յենթարկված հավակնոտության մի նմուշ:

Միանդամայն հնարավոր ե, վոր Նաղեժդա կոնսուանտինովնան իրոք ասել ե ընկ. Բուխարինին այն, ինչի մասին ընկ. Բուխարինը զրում է այսուել: Բայց սրանից ի՞նչ է հետեւում: Սրանից միայն մի բան է հետեւում, վոր Լենինը վորոշ հիմքեր ուներ կարծելու, թե ընկ. Բուխարինը հրաժարվել է կամ պատրաստ է հրաժարվելու իր սխաներից: Միմիայն այսքանը: Բայց ընկ. Բուխարինն այլ կերպ է հաշիվ արել: Նա վճռել ե, վոր այսուհետեւ պետության մարքսիստական թեորիայի ստեղծությունը, կամ, համեստայն դեպք, ներչնչող, պետք է համարվի վո'չ թե Լենինը, այլ ինքը, այսինքն՝ ընկ. Բուխարինը:

Մինչև այժմ մենք մեզ լենինիստներ ենք համարել ու շարունակում ենք համարել: Իսկ այժմ բանից դուրս ե գալիս, վոր թե՛ լենինը, թե՛ մենք՝ նրա աշակերտները, բուխարինականներ ենք: Մի քիչ ծիծաղելի յե, ընկերնե՛ր: Բայց ի՞նչ կարող ես անել, յերբ հարկ է լինում գործ ունենալ ընկ. Բուխարինի փրկած հավակնոտության հետ:

Կարելի յե կարծել, թե վերոհիշյալ հողվածի իր ծանոթագրության մեջ ընկ. Բուխարինը վրիպել ե, թե նա հիմարու-

¹ Ընդդումն իմն ե: Դ. Ստ.:

² «Իրավունքի հեղափոխություն» («Революция права») ժող., I հրամանակունական Ակադեմիայի, 1925 թ., էջ 5:

Թյուն է ասել ու հետո մոռացել ե նրա մասին: Բայց բանից դուրս ե գալիս, վոր դա ուղիղ չե: Ընկ. Բուխարինը, բանից դուրս ե դալիս, միանդամայն լուրջ ե ասել: Այդ յերեսում ե թեկության այն բանից, վոր ընկ. Բուխարինի հայտարարությունը լենինի սխալների ու Բուխարինի իրավացիության մասին, վոր նա արել է այդ ծանոթագրության մեջ, նորից ե հրապարակվել մոտ ժամանակներս, այն ե՝ 1927 թվականին, այսինքն՝ ընկ. Բուխարինի կողմից լենինի դեմ գործած առաջին արտելքից յերկու տարի անց, ընկ. Բուխարինի մասին ընկ. Մարեցկու գրած կենսագրական ակնարկում (տե՛ս «Խորհրդային ենցիկլոպեդիան»), ընդվորում ընկ. Բուխարինը չի ել մտածել բողոքելու ընկ. Մարեցկու այլպիսի... համարձակության դեմ: Պարզ ե, վոր ընկ. Բուխարինի յելույթը լենինի դեմ չի կարելի պատահականություն համարել:

Այսպիսով դուրս ե գալիս, վոր իրավացի յե Բուխարինը և վոչ թե լենինը, վոր պետության մարքսիստական թեորիայի ներշնչողը վո'չ թե լենինն ե, այլ Բուխարինը:

Այս ե, ընկերնե՛ր, ընկ. Բուխարինի թեորիական խեղությունների (ԵՎԻԽՕԲ) ու թեորիական հավակնոտությունների պատկրը:

Յեկ այդ մարդն այս ամենից հետո համարձակություն ունի այսուեղ իր ճառում ասելու, թե մեր կուսակցության թեորիական դիրքավորման մեջ «ինչ-ըլոր մի բան փոտա՛ծ ե», վոր մեր կուսակցության թեորիական դիրքավորման մեջ թեքո՛ւմ կա դեպի տրոցկիզմը: Յեկ այդ ասում է հենց ա՛յն ընկ. Բուխարինը, վոր թույլ ե տալիս (ու թույլ ե տվել անցյալում) մի շարք ամենակողիս թեորիական ու պրակտիկ սխալներ, վորը զենքս մոտ անցյալում աշակերտում եր Տրոցկուն, վորը զեռես յերեկ ձրդում եր բլո՛կ կազմել տրոցկիստների հետ լենինիստների դեմ ու հետին մոռագրվ նրանց մետ եր վազում: Դեռ, մի՛թե այս ծիծաղելի չե, ընկերնե՛ր:

բ) ՀՆԳԱՄՅԱԿ ԹԵ ՑԵՐԿԱՄՅԱԿ

Այժմ թույլ տվեք անցնել ընկ. Ռիկովի ճառին: Յեթե ընկ. Բուխարինը փորձում եր տալ աջ թեքման թեորիական հիմնավորումը, ապա ընկ. Ռիկովն իր ճառում ջանում է այդ բանի առակարկությունների բազա, մեզ վախեց-

նելով գյուղատնտեսության զծով մեր ունեցած դժվարությունների բնադրավառից առնված «սարսափներով»։ Այս չի նշանակում, թե ընկ. Ռիկովը թեորիական հարցեր չոչափեց։ Վո՞չ, նա այդ հարցերը չոչափեց։ Բայց, դրանք չոչափելով, թույլ տվեց գոնե յերկու լուրջ սխալ։

Հնդամյա պլանի վերաբերյալ բանաձեկի իր նախազծում, վորը մերժվեց Քաղբյուրոյի հանձնաժողովի կողմից, ընկ. Ռիկովն ասում է, թե «հնդամյա պլանի կենտրոնական դադարարը ժողովրդական աշխատանքի արտադրողականության աճումն է»։ Չնայած այն բանին, վոր Քաղբյուրոյի հանձնաժողովը մերժեց այդ միանդամայն սխալ դիրքավորումը, ընկ. Ռիկովն այսուղ իր ճառում պաշտպանում էր այն։ Ճի՞շտ ե արդյոք, վոր խորհրդային յերկում հնդամյա պլանի կենտրոնական դադարարն աշխատանքի արտադրողականության աճումն է։ Վո՞չ, սխալ է։ Ճե՞ վոր մեզ հարկավոր ե ժողովրդական աշխատանքի արտադրողականության վոչ ամեն տեսակի աճում։ Մեզ հարկավոր ե ժողովրդական աշխատանքի արտադրողականության վորոշ տեսակի աճում, — այն ե՝ այնպիսի աճում, վորն ապահովում ե ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորի սխանմատիկ գերակշռությունը կապիտալիստական սեկտորից։ Ահա թե բանն ինչումն է, ընկերնե՞ր։ Այն հնդամյա պլանը, վոր կմոռանա այս կենտրոնական դադարի մասին, հնդամյա պլան չե, այլ հընդամյա ցնդարձանություն։ Աշխատանքի արտադրողականության աճմամբ շահագրգուլած ե ընդհանրապես ամեն մի հասարակություն՝ թե՛ կոտիտալիստականը, թե՛ մինչկապիտալիստականը։ Խորհրդային հասարակության տարբերությունն ամեն մի այլ հասարակությունից հենց այն ե, վոր նա շահագրգուլած ե աշխատանքի արտադրողականության վոչ ամեն մի աճմամբ, այլ այնպիսի աճմամբ, վորն ապահովում ե տնտեսության սոցիալիստական ձևերի գերակշռությունն այլ ձևերից և ամենից առաջ տնտեսության կապիտալիստական ձևերից, վորն այդպիսով ապահովում ե տնտեսության կապիտալիստական ձևերի հաղթահարումն ու արտամզումը։ Իսկ ընկ. Ռիկովը մոռացել է խորհրդային հասարակության զարգացման հնդամյա պլանի այս իսկապես կենտրոնական դադարի մասին։ Այս ե նրա թեորիական առաջին սխալը։

Նրա յերկորդ սխալն այն ե, վոր նա ապրանքաշրջանառության տեսակետից տարբերություն չի դնում կամ չի ցանկա-

նում հասկանալ տարբերությունը, ասենք, կոլտնտեսության և ամեն մի անհատական տնտեսության, այդ թվում անհատական կապիտալիստական տնտեսության միջև։ Ընկ. Ռիկովը հավատացնում է, թե հացի շուկայում յեղած ապրանքաշրջանառության տեսակետից, հաց ստանալու տեսակետից ինքը տարբերություն չի տեսնում կոլտնտեսության և մասնավոր հացատիրոջ միջև, հետեւարար՝ նրա համար միենույն ե, արդյոք մենք հացը կոլտնտեսությունից ենք գնում, մասնավոր հացատիրոջից, թե՞ հացի վորեւե արգենտինյան մեծագնորդից։ Սա սխալ է, ընկերնե՞ր։ Սա միանդամայն սխալ է։ Սա կրկնություն է ընկ. Թրումկինի հայտնի հայտարարության, վորը մի ժամանակ հայլատացնում էր, թե իրեն համար միենույն ե հացը վորտեղ գնել և ումից գնել՝ մասնավորից, թե կոլտնտեսությունից։ Սա հացի շուկայում կատարվող կուլակային մեքենայությունների պաշտպանության, ռեարիլիտացիայի, արդարացման դիմակավորված ձեն է։ Այն փաստը, վոր այս պաշտպանությունը կատարվում ե ապրանքաշրջանառության տեսակետից, —այդ փաստը չի փոխում գործի ելությունը, վոր դա այնուամենայինիվ հացի շուկայում կատարվող կուլակային մեքենայությունների արգարացումն է։ Յեթե ապրանքաշրջանառության տեսակետից տարբերություն չկատարելության կոլեկտիվ ու վոչ-կոլեկտիվ ձևերի միջև, ապա այն ժամանակ արժե՞ արդյոք կոլտնտեսությունները զարգացնել, արժե՞ արդյոք նրանց արտանություններ տալ, արժե՞ արդյոք զրաղվել դյուլատնտեսության մեջ կապիտալիստական տարբերին հաղթահարելու դժվար խնդրով։ Պարզ ե, վոր ընկ. Ռիկովը սխալ դիրքավորում ե վերցրել։ Այս ե նրա թեորիական յերկորորդ սխալը։

Բայց այս անցողակի կերպով։ Անցնենք ընկ. Ռիկովի ճառում գրված գործնական հարցերին։

Ընկ. Ռիկովն այսուել պնդում էր, վոր բացի հնդամյա պլանից, հարկավոր ե ելի մի ուրիշ, զուգահեռ պլան, այն ե՝ զյուղատնտեսության զարգացման յերկամյա պլան։ Զուղահեռ յերկամյա պլանի այդ առաջարկը նա հիմնավորում եր զյուղատնտեսության մեջ յեղած դժվարություններով։ Նա ասում էր. հնդամյա պլանը լավ բան ե, և ինքը դրան կողմնակից ե, բայց յեթե մենք միաժամանակ տանք զյուղատնտեսության յերկամյա պլանը, ապա ե՛լ ավելի լավ կլինի, —հակառակ դեպքում զյուղատնտեսության գործը կանգ կառնի։ Արտաքուստ այս առաջարկը կար-

Ֆես թե վոչ մի վատ բան չի ներկայացնում: Բայց յեթե գործին մոտիկից նայելու լինենք, դուքս ե դալիս, վոր գյուղատնտեսության յերկամյա պլանը հնարված ե այն նորատակով, վորապեսզի ընդդժվի հնդամյա պլանի վոչ-ուետ, թղթային բնույթը, և ընդհակառակը: Կարո՞ղ եյինք մենք արդյոք համաձայնել սրան: Պարզ ե, վոր չեյինք կարող: Մենք ընկ. Ռիկովին ասում եյինք. յեթե դուք գժղոհ եք գյուղատնտեսության հնդամյա պլանից, յեթե դուք անբավարար եք համարում այն հատկացումները, վորոնք հնդամյա պլանով տրվում են գյուղատնտեսության զարդացման համար, ապա ուղղակի ասացեք ձեր լրացուցիչ առաջարկների մասին, ձեր լրացուցիչ ներդրումների մասին,—մենք համաձայն ենք հնդամյա պլանի մեջ մտցնելու այդ լրացուցիչ ներդրումները գյուղատնտեսության համար: Յեվ ի՞նչ: Բանից գուրս յեկավ, վոր ընկ. Ռիկովը վոչ մի լրացուցիչ առաջարկ չունի գյուղատնտեսության համար լրացուցիչ ներդրանքներ անելու մասին: Հարց ե ծագում. ել ինչի՞ համար ե այն ժամանակ գյուղատնտեսության գուղահեռ յերկամյա պլանը: Այնուհետև մենք ասում եյինք նրան. բացի հնդամյա պլանից, կան նաև տարեկան պլաններ, վորոնք հնդամյակի մասն են. յեկեք առաջին յերկու տարվա տարեկան պլանների մեջ մտցնենք գյուղատնտեսության վերելքի գծով արվող այն լրացուցիչ կոնկրետ առաջարկները, վոր դուք ունեք, յեթե ընկ. Ռիկովն առհասարակունի այլպիսի առաջարկներ: Յեվ ի՞նչ: Բանից գուրս յեկավ, վոր ընկ. Ռիկովը լրացուցիչ հատկացումների այդպիսի կոնկրետ պլաններ չունի առաջարկելու: Այն ժամանակ մենք հասկացանք, վոր յերկամյա պլանի մասին ընկ. Ռիկովի առաջարկի մեջ նկատի յե առնվում վո՞չ թե գյուղատնտեսության վերելքը, այլ հնդամյակի վոչ-ուետ, թղթային բնույթն ընդդժելու ցանկությունը, հնդամյակը պատկաղերծ անելու ցանկությունը: «Հողու» համար, ձեւի համար հնդամյա պլան, գործի համար, գործնական աշխատանքի համար—յերկամյա պլան,—ահա թե ինչպիսի ստրատեգիա ստացվեց ընկ. Ռիկովի մոտ: Ընկ. Ռիկովի մոտ յերկամյա պլանը հրապարակ յեկավ, վորպեսզի հետո, հնդամյա պլանի գործնական իրականացման ընթացքում, հնդամյակին հակադրվի յերկամյակը, հնդամյակը վերակազմվի ու հարմարեցվի յերկամյա պլանին՝ կրծատելով ու խուզելով ինդուստրիայի գործի համար արվող հատկացումները:

Այս թե ինչ նկատառումներով մենք մերժեցինք ընկ. Ռիկովի առաջարկը դուդահեռ յերկամյա պլանի մասին:

թ) ՑԱՆՔԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ընկ. Ռիկովն այստեղ կուսակցությանը վախեցնում էր՝ հավատացնելով, վոր ցանքի տարածությունները ԽՍՀՄ-ում սփառեմատիկաբար կրծատվելու տենդենց ունեն: Ընդուժին նա դիմուվ եր անում կուսակցության կողմը, ակնարկելով այն բանը, վոր ցանքի տարածությունների կրծատման մեղավորը կուսակցության քաղաքականությունն ե: Նա ուղղակի չեր ասում, թե մեղանում բանը դեպի գեղրադացիս յե զնում: Բայց նրա ճառից այնպիսի տպակորություն ե ստացվում, վոր մենք գեղրադացիսի նման մի բան առկա ունենք: Ճի՞շտ ե արդյոք, վոր ցանքի տարածությունները սփառեմատիկ կրծատման տենդենց ունեն: Վո՞չ, ճիշտ չե: Ընկ. Ռիկովն այստեղ գործառում եր յերկրի ցանքի տարածությունների վերաբերյալ միջին թվերով: Բայց միջին թվերի՝ շրջանների տվյալներով չորրազրված՝ մեթոդը գիտական մեթոդ չե: Գուցե ընկ. Ռիկովը յերբեկց կարդացել ե լենինի հկապիտակմի գարգացումը»: Յեթե նա կարդացել ե, նա պետք է հեշի, թե լենինն այստեղ ինչպես ե հայույում բուրժուական տնտեսագետներին, վորոնք ողտվում են ցանքի տարածությունների աճման վերաբերյալ միջին թվերի մեթոդից և անտեսում են ըստ շրջանների տվյալները: Տարրինակ ե, վոր ընկ. Ռիկովն այժմ բուրժուական տնտեսագետների սփառներն ե կրկնում: Յեվ ահա, յեթե քննության առնենք ցանքի տարածությունների շարժումն ըստ շրջանների, այսինքն՝ յեթե գործին մոտենանք գիտականորեն, ապա դուրս ե դալիս, վոր վորոշ շրջաններում ցանքի տարածությունները սփառեմատիկորեն աճում են, մյուսներում՝ նրանք յերբեմն նվազում են, դիմավորապես նայած ողերեւութաբանական պայմաններին, ընդվորում չկան այնպիսի տվյալներ, վորոնք խոսեյին այն մասին, թե մենք վորեն տեղ, լուրջ հացարեր շրջաններից թեկուզ մեկում, ցանքի տարածությունների սփառեմատիկ կրմառում ունենք:

Իրոք, ցրտահարությամբ կամ յերաշտով բռնված շրջաններում, որինակ, Ռւկրախնայի մի քանի մարզերում, ցանքի տարածությունները վերջին ժամանակներս կրծատում են ցուցը տառմա:

Մի ձայն: Վոչ ամբողջ Ռւկրախնան:

Ելիստեր: Ուկրաինայում ցանքի տարածություններն ավելացել են 2,7%-ով:

Ստալին: Ցես նկատի ունեմ Ուկրաինայի տահաստանային շերաբ: Իսկ այս ուրիշ շրջաններում, ասենք՝ Սիբիրում, Պովլուժյեյում, Կազակստանում, Բաշկիրիայում, Վորոնջ չեն վնասվել կլիմայական աննպաստ պայմաններից, ցանքի տարածությունները սիստեմատիկարար աճում են: Ինչո՞վ բացատրել, վոր վորոշ շրջաններում ցանքի տարածությունները սիստեմատիկարար աճում են, իսկ մյուսներում՝ յերբեմն կրծատվում են: Իսկապես Հո չի՞ կարելի պնդել, թե կուսակցությունն Ուկրաինայում ունի մի քաղաքականություն, իսկ արևելքում կամ ԽՍՀՄ-ի կենտրոնում—մեկ ուրիշ: ԶԵ՞ վոր սա արտուրդ ե, ընկերներ: Պարզ ե, վոր կլիմայական պայմաններն այստեղ սակալ կարեռ նշանակություն չունեն:

Ճիշտ ե, վոր կուլակները ցանքի տարածությունները կըրծատում են՝ անկախ կլիմայական պայմաններից: Մրանում, թերեւս, «մեղավոր ե» կուսակցության քաղաքականությունը, վորի եյությունն այն ե, վոր աջակցենք չքավոր—միջակային մասսաներին կուլակության դեմ: Բայց սրանից ի՞նչ ե հետեւում: Մի՛թե մենք յերբեք պարտավորվել ենք այնպիսի քաղաքականություն վարել, վորը կարողանար բավարարել գյուղի սոցիալական բոլոր խմբերին, այդ թվում նաև կուլակներին: Յեվ առհասարակ, մի՛թե մենք կաբող ենք վարել այնպիսի քաղաքականություն, վորը բավարարել թե՛ շահագործողներին, թե՛ շահագործվողներին, յեթե մենք առհասարակ ցանկանում ենք մարքսիստական քաղաքականություն վարել: Ի՞նչ մի առանձին բան կա այստեղ, յեթե մեր լենինյան քաղաքականության հետեանքով, վորը նկատի յետ առել կապիտալիստական տարրերի սահմանափակումն ու հաղթահարումը դյուլում, կուլակներն սկսում են մասնակիորեն կրծատել իրենց ցանքերը: Բայց մի՛թե կարող ե այլ կերպ լինել: Գուցե այդ քաղաքականությունը ճիշտ չե, —թողայիտ մասին ուղղակի ասեն մեղ: Տարորինակ չե՞ արդյոք, վոր մարդիկ, վորոնք իրենց մարքսիստ են անվանում, կուլակների ցանքերի մասնակի կրծատումը վախից ջանում են ներկայացնել իրեն առհասարակ ցանքի տարածությունների կրծատում, մոռանում են այն մասին, վոր բացի կուլակներից, գոյություն ունեն նաև չքավորներ ու միջակներ, վորոնց ցանքերն ընդարձակվում են, գոյություն ունեն կուլակներում ու խորհանություններ, վորոնց ցանքերն աճում են արագացրած աեմպով:

Վերջապես, մի անձտություն ևս ընկ, Արիկովի ճառի մեջ շանքերի տարածությունների հարցի վերաբերյալ: Ընկ Արիկովի ույստեղ գանդատվում եր, վոր տեղաւեղ, այն ե՝ կոլանտեսությունների առավելացույն զարդացման տեղերում, չքավոր—միջակային անհատական հողաշերտը (ՔԼԻՒ) սկսում ե կրծատվել: Այդ ճիշտ ե: Իսկ այստեղ ի՞նչ վատ բան կա: Ուրիշ ել ի՞նչ կերպ լիներ: Յեթե չքավոր—միջակային անտեսություններն ուկրասում են թողնել անհատական հողաշերտը և անցնում են կոլիկատիվ տնտեսության, առաջ մի՛թե պարզ չե, վոր կոլանտեսությունների ընդարձակման ու բաղմապատկման հետևանքը պետք ե լինի անհատական չքավոր—միջակային հողաշերտի վորոշ կրծատումը: Իսկ դուք ի՞նչպես եք ուղղում: Այժմ կոլտնտեսությունները յերկու միլիոն հետարրից ավելի հող ունեն: Հնդամյակի վերջին կոլտնտեսությունները կունեսան ավելի քան 25 միլիոն հեկտար: Այստեղ ո՞ւմ հաշվին ե աճում կոլտնտեսային հողաշերտը: Անհատական չքավոր—միջակային հողաշերտի հաշվին: Իսկ դուք ի՞նչպես եք ուղղում, թանգաղին ընկերներ: Այլ կերպ անհատական չքավոր—միջակային տնտեսությունն ի՞նչպես փոխադրենք կոլեկտիվ անտեսության ուկերների վրա: Մի՛թե պարզ չե, վոր կոլտնտեսային հողաշերտը մի ամերող շարք շրջաններում աճելու յետ անհատական հողաշերտի հաշվին: Տարորինակ ե, վոր մարդիկ չեն ուղղում այս պարզ բանները հասկանալ:

ԺԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հացի գործում մեր ունեցած դժվարությունների մասին այստեղ մի ամբողջ կույտ չեղած բաններ ասացին: Բայց մեր հացի կոնյունկտուրային դժվարությունների գլխավոր մոմենտներն աչքաթող արին: Մոռացան ամենից առաջ այն, վոր համար ու ցորեն այս առաջ տարվանից մի 500—600 միլիոն վութ պակաս հավաքեցինք, —յետ խոսում եմ բերքի համախառն հավաքի մասին: Կարո՞ղ եր արդյոք այս բանը չանդրադառնալ մեր հացամթերումների վրա: Իւարիկ, չեր կարող չանդրադառնալ: Գուցե սրանում կերպ քաղաքականությունն ե մեղավոր: Վո՞չ, կերպ քաղաքականությունն այստեղ գործ չունի: Սա բացարձում է Ուկրաինայի տակաստանային շերտում յեղած լուրջ անբերքատվությամբ (ցրտահարություն ու յերաշտ) ու Հյուսիսային կովկասում, Կենտրոնական Սևահող մարդում, վերջապես Հյուսիսարևեմտյան մարզում յեղած մասնակի անբերքատվությամբ: Մրա-

նով ել գլխավորապես բացատրվում է այն, վոր անցյալ տարի առ 1-ի ապրիլի մենք Ռևլրախնայում մթերել ելինք 200 միլիոն փութ հաց (հաճար ու զորեն), իսկ այս տարի—ընդամենք 26—27 միլիոն փութ։ Դարձյալ սրանով պետք է բացատրել ցարենի ու հաճարի մթերումների անկումը կենուրունական Սևահող մարդում համարյա 8 անգամ և Հյուսիսային Կովկասում—4 անգամ։ Հացամթերումներն արևելքում այս տարի միքանի շրջաններում ավելցել են համարյա կրկնակի չափով։ Բայց նրանք չեյին կարող ծածկել ու ծածկեցին, իհարկե, հացի այն պակասը, վոր մեղ մոտ գոյություն ուներ Ռևլրախնայում, Հյուսիսային Կովկասում և կենուրունական Սևահող մարդում։ Պահտք է մուսանալ, վոր նորմալ բերքերի դեպքում Ռևլրախնան ու Հյուսիսային Կովկասը մթերում են ԽՍՀՄ-ում մթերքող ամրողջ հացի կեսից ավելին, իսկ յերբեմն ել յերկու յերրորդականը։ Տարրինակ է, վոր այս հանդամանքն ընկ. Ռիկովն աչքաթող է արել։

Վերջապես, յերկրորդ հանդամանքը, վոր մեր հացամթերումների կոնյունկտուրային դժվարությունների գլխավոր մոմենտն է։ Յես նկատի ունեմ դյուղի կուլակային և ունեոր տարբերի դիմադրությունը հացամթերումների վերաբերյալ խորհրդացին իշխանության քաղաքականությանը։ Ընկ. Ռիկովը զանց առավ այս հանդամանքը։ Բայց զանց առնել այս մոմենտ՝ նշանակում է զանց առնել գլխավորը հացամթերման գործում։ Ինչի՞ մասին է խոսում հացամթերումների գործում վերջին յերկու տարիվա ձեռք բերած փորձը։ Նա խոսում է այն մասին, վոր դյուղի կարողության տեր խավերը, վորոնք իրենց ձեռքին ունեն հացի նշանակալի ալելցուկներ ու հացի չուկայում իշխող դեր են խաղում, հոժարակամ կերպով չեն ուզում հարկավոր քանակությամբ հաց տալ մեղ այն դներով, վոր խորհրդացին իշխանությունն և սահմանել։ Քաղաքներն ու արդյունաբերական կետերը, կարմիր բանակն ու տեխնիկական կուլտուրաների շրջանները հացավ ապահովելու համար մեղ հարկավոր և տարեկան մոտ 500 միլիոն փութ հաց։ Ինքնահօսի կարգով մեղ հաջողվում է մթերել մոտ 300—350 միլիոն փութ։ Մնացած 150 միլիոն փութը հարկ է լինում վերցնել դյուղի կուլակային և ունեոր խավերի վրա կազմակերպված ճնշում դործ դնելու կարգով։ Ահա թե ինչ և առում մեղ վերջին յերկու տարիվա հացամթերումների փորձը։

Ի՞նչ է տեղի ունեցել այս յերկու տարիվա ընթացքում, վորութի՞ց են այսպիսի փոփոխությունները, ինչո՞ւ առաջ ինքնա-

հոսն ովնում եր, իսկ այժմ անբավարար դուրս յեկավ այն։ Տեղի յեւնեցել այն, վոր կուլակային և ունեոր տարբերն այդ տարիներում աճել են, մի շարք բերքառատ տարիները նրանց համար զուր չեն անցել, նրանք ամրացել են անտեսավես, փոքրիկ կապիտալ են կուտակել և այժմ նրանք կարող են մանելու շուկայում, իրենց մոտ պահելով հացի ավելցուկները՝ սպասելով բարձր գների և մյուս կուտարաններով լրջանառություն կատարելով։ Հացը հասարակ ապրանք չե։ Հացը բամբակ չե, վոր չի կարելի ուսեւ չի կարելի ամեն մեկին վաճառել։ Ի տարբերություն բամբակից՝ հացը մեր ներկա պայմաններում այնպիսի ապրանք ե, վորը բոլորն ել վերցնում են և առանց վորի չի կարելի գոյություն ունենալ։ Կուլակն այս հացի յեւնում, և պահում է այն, դրանով վարակելով առհասարակ հացատերերին։ Կուլակը գիտե, վոր հացը վալյուտաների վալյուտան է։ Կուլակը գիտե, վոր հացի ավելցուկները վոչ միայն իրեն հարըտացնելու միջոց են, այլև չքավորությանն սորկացնելու միջոց։ Հացի ավելցուկները կուլակի ձեռքին տվյալ պայմաններում կուլակային տարրերի անտեսական ու քաղաքական ուժեղացման միջոց են։ Ուստի այդ ավելցուկները կուլակներից վերցնելով՝ մենք վոչ միայն հետացնում ենք քաղաքներին ու կարմիր բանակին հաց մատակարարելը, այլև խարիստան ենք կուլակության անտեսական ու քաղաքական ուժեղացման միջոցը։

Ի՞նչ պետք է անել հացի այդ ավելցուկներն ստանալու համար։ Հարկավոր ե նախ և առաջ լիկիդացիայի յննթարկել ինքնահօսի հոգեբանությունը վորպիս վնասակար ու վտանգավոր միքան։ Հարկավոր ե հացամթերումները կազմակերպել։ Հարկավոր է չքավոր-միջակային մասսաներին մորթիվացիայի յննթարկել կուլակության դեմ ու կազմակերպել նրանց հասարակական աջակցությունը խորհրդացին իշխանության միջոցառումներին՝ հացամթերումների ուժեղացման գործում։ Հացամթերումների ուրարտի մեթոդի նշանակությունը՝ մի մեթոդ, վոր կենսագործվում է ինքնահարկման սկզբունքի համաձայն,՝ հենց այն է, վոր նա հնարավորություն է տալիս մորթիվացիայի յննթարկելու դյուղի աշխատավոր խավերին կուլակության գեղ՝ հացամթերումներն ուժեղացնելու գործի համար։ Փորձը ցույց տվեց, վոր այդ մեթոդը դրական արդյունքներ է տալիս մեղ։ Փորձը ցույց տվեց, վոր այդ մեթոդը դրական արդյունքները մեզանում ստացվում են յերկու ուղղություններ, նախ՝ մենք վերցնում ենք զյուղի՝

կարողության տեր խավերի հացի ավելցուկները, դրանով հետացնելով յերկրի մատակարարումը. յերկրորդ՝ այդ գործով մենք չքավոր-միջակային մասսաներին մորիկիվացիայի յևնք յենթարկում կուլակության դեմ, քաղաքականապես լուսավորում ենք նրանց ու նրանցից մեր հզոր բաղմամիլիոն քաղաքական բանակն ենք կազմակերպում զյուղում: Ընկերներից վոմանք հաշվի չեն առնում այս վերջին հանդամանքը; Մինչդեռ հենց այդ ե, վոր հացամթերումների ուրալսիրիյան մեխողի կարեոր հետևանքներից մեկն ե հանդիսանում, յեթե վոչ ամենակարեորը: Ճիշտ ե, այդ մեթողը յերբեմն զուղակցվում ե կուլակության դեմ արտակարդ միջոցառումներ կիրառելու հետ, վորն ընկ. ընկ. Բուխարինի ու Ռիկովի կոմիկական վայնասումներն ե առաջացնում: Իսկ սրանում ի՞նչ վատ բան կա: Ինչո՞ւ չի կարելի յերբեմն, վորոշ պայմաններում, արտակարդ միջոցառումներ կիրառել մեր զասակարգային թշնամու դեմ, կուլակության դեմ: Ինչո՞ւ կարելի յե քաղաքներում հարյուրներով սպեկուլանուներ ձերբակալել և Տուրուխանյան յերկիրն աքսորել նրանց, իսկ կուլակներից, վորոնք փորձում են խորհրդային իշխանության կոկորդից բռնել և իրենց ստրուկը դարձնել չքավորներին, չի կարելի հացի ավելցուկները վերցնել հասարակական հարկադրանքի կարգով այն գներով, վորոնցով մեր մթերող կազմակերպություններին չքավորներն ու միջակներն են հաց հանձնում: Վո՞րածեղից ե հետեւում այդ: Միթե մեր կուսակցությունը կուլակության նկատմամբ արտակարդ միջոցառումներ կիրառելուն սկըզբունքով յերեւե դէ՞մ ե արտահայտվել: Ընկերներ Ռիկովն ու Բուխարինն ակներեն սկզբունքով դեմ են կուլակության նկատմամբ ամեն մի արտակարդ ձեռնարկում կիրառելուն: Բայց չի՞ վոր դա բուրժուական-լիբերալ քաղաքականություն ե և վոչ թե մարքսիստական քաղաքականություն, թանգարին ընկերներ: Դուք չեք կարող չիմանալ, վոր լենինը նեմը մտցնելուց հետո արտահայտվում եր մինչև իսկ չքավորական կոմիտեների քաղաքականությանը վերադառնալու ողտին, իհարկե, վորոշ պայմաններում: Իսկ կուլակների դեմ արտակարդ միջոցառումների մասնակի կիրառումն ի՞նչ բան ե վոր: Այդ մինչև անդամ մի կաթիլ չե ծովում՝ չքավորական կոմիտեների քաղաքականության հետ համեմատած:

Նրանք, ընկ. Բուխարինի խմբի կողմանկիցները, հույս ունեն զասակարգային թշնամուն համոզելու, վոր նա հոժարակամ

հրաժարվի իր չահերից ու հոժարակամ մեղ հանձնի իր հացի ավելցուկները: Նրանք հուսով են, վոր կուլակը, վորն աճել ե, վորը հարավորություն ունի իր տվածի տեղը հանել այլ կուլառուաներով ու վորը թաղցնում ե իր հացի ավելցուկները, նրանք հուսով են, թե հենց այդ կուլակը հոժարակամ կտա մեղ հացի իր ավելցուկները մեր մթերման գներով: Զե՞ն իսկագարվել արդյոք նրանք: Պարզ չե՞ միթե, վոր նրանք չեն հաօքանում դասակարգային կամի մեխանիկան, չդիտեն, թե ինչ բան են դասակարգերը: Իսկ հայտնի՞ յե արդյոք նրանց, թե կուլակներն ինչպես են ծաղրում մեր աշխատողներին ու խորհրդային իշխանությանն այն դյուղական համայնական ժողովներում, վորոնք կազմակերպվում են հացամթերումներն ուժեղացնելու համար: Արդյոք նրանց հայտնի՞ յեն այնպիսի փաստեր, յերբ մեր ազիտառորը, որինակ, կազմակստանում յերկու ժամ համոզում եր հացատերերին հաց հանձնել յերկրի մատակարարման համար, իսկ կուլակը ծխամորճը բերանին հանդես ե յեկել ու պատասխանել նրան. «Ապա մի պար արի, յերիտասարդ, այն ժամանակ յես քեզ մի-յերկու փութ հաց կտամ»:

Զայներ: Սրիկանե՞ր:

Ստալին: Ապա մեկ համոզեցեք այդպիսի մարդկանց: Այո՛, ընկերնե՞ր, դասակարդը—դասակարդ ե: Այս ծշմարտությունից չես խուսափի: Ուրալսիրիյան մեթողն իսկապես հենց նրանով ե լավ, վոր այն հեշտացնում ե չքավոր-միջակային խավերին կուլակների զեմ հանելու հասարավորությունը, հեշտացնում ե կուլակների դիմազրությունը կոտրելու հնարավորությունը և նրանց հարկադրում ե հացի ավելցուկները հանձնելու խորհրդային իշխանության որդաններին:

Այժմ ամենամոդայական բառը նոր ոպողիցիայի շարքերում, ընկ. Բուխարինի խմբի շարքերում, հանդիսանում ե «չափազանցումներ» (ուրեմն) բառը հացամթերումների բնագավառում: Այս բառը նրանց մոտ ամենազնայուն (самый ходкий) ապրանքն ե, վորովհետեւ այդ բառն ողնում ե նրանց դիմակավորելու իրենց սեփական գիծը: Յերբ նրանք ցանկանում են գիմակավորել իրենց գիծը, նրանք սովորաբար ասում են. մենք, իհարկե, դեմ չենք կուլակների վրա ճնշում գործ դնելուն, բայց մենք դեմ ենք չափազանցումներին, վորոնք թույլ են տրվում այս բնագավառում ու վորոնք դիպչում են միջակին: Այնուհետեւ դալիս են այդ չափազանցումների սարսափների վերաբերյալ

պատմությունները, ընթերցվում են «գյուղացիների» նամակները, ընթերցվում են այնպիսի ընկերների խուճապային նամակները, ինչպես ընկ. Մարկովն ե, ու հետո յեղակացություն ե արդում. Հարկավոր ե վերացնել կուլակության վրա ճնշում գործոններու քաղաքականությունը: Զեյթօք հաճի արդյոք. բայի վոր ճիշտ քաղաքականության կենսագործման մեջ չափազանցումներ կան, ուստի, բանից դուրս ե դալիս, հարկավոր ե վերացնել հենց այդ նիշու բաղաքականությունը: Այս և ոպորտունիստների սովորական յեղանակը. ճիշտ գծի կենսագործման մեջ յեղած չափազանցումների հիման վրա—վերացնել այդ գիծը՝ այն փոխարինելով ոպորտունիստական գծով: Ընդումին ընկ. Բուխարինի խմբին պատկանող ընկերները խնամքով լուսություն են սկսած այն ժամին, վոր չափազանցումների ուրիշ տեսակ ել գոյություն ունի, ավելի վտանգավոր ու ալելի վնասակար մի տեսակ, այն և չափազանցումներ կուլակության հետ սերտածելու (ըրատանե) կողմը, գյուղի ունեոր խավերին հարմարվելու կողմը, կուսակցության հեղափոխական քաղաքականությունն աջ ուկլոնիստների ոպորտունիստական քաղաքականությամբ փոխարինելու կողմը:

Իհարկե, մենք բոլորս դեմ ենք այդ չափազանցումներին: Մենք բոլորս դեմ ենք այն բանին, վոր կուլակության դեմ ուղղվող հարվածները միջակներին գիտչեն: Այս պարզ ե, ու որա ժամին վոչ մի կասկած չի կարող լինել: Բայց մենք վճռականութեմ ենք այն բանին, վոր չափազանցումների վերաբերյալ շաղակրատությամբ, վորը ջանասիրաբար գործադրում ե ընկ. Բուխարինի խումբը, ընկանենք մեր կուսակցության հեղափոխական քաղաքականությունը և այն նենդափոխնենք ընկ. Բուխարինի խմբի ոպորտունիստական քաղաքականությամբ: Վո՞չ, ընկերներ, «ձեր այս նոմերը չի անցնի»:

Կուսակցության ձեռք առած գեթ մի քաղաքական միջոցառման անուն տվեք, վորին չուղեկցեր այս կամ այն չափազանցումը: Սրանից հետեւում ե, վոր հարկավոր ե պայքարել չափազանցումների դեմ: Բայց մի՞թե այս իման վրա կարելի յե պարսավել բուն իսկ գիծը, վոր միակ ճիշտ գիծն ե: Վերցնենք մի այնպիսի միջոցառում, ինչպես 7-ժամյա աշխատորված կենսագործումն ե: Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր այս միջոցառումը վերջին ժամանակներս մեր կուսակցության կիրառած ամենահետափոխական միջոցառումներից մեկն ե: Ո՞ւմ հայտնի չե, վոր այդ, ըստ եյության խորապես հեղափոխական, միջոցառումը

մեղանում հենց մի գլուխ ուղեկցվում ե մի ամբողջ շարք չափազանցումներով, յերեմն ամենագալը լի չափազանցումներով: Նշանակո՞ւմ ե այս արդյոք, վոր մենք պետք ե վերացնենք 7-ժամյա աշխատորված կենսագործման քաղաքականությունը: Նոր ոպողիցիւնին պատկանող ընկերները հասկանո՞ւմ են արդյոք, թե ինչ ցեխաջրի մեջ են ընկնում իրենք, իբրև կողը ծառայեցնելով հացամթերման գործում յեղած չափազանցումները:

ԱԶ ԹԵՔՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այսպիսով մենք քննության առանք ինչպես թեորիայի բնադրակում, այնպես ել մեր կուսակցության կոմիտեին յանքին քաղաքականության բնագավառում յեղած մեր տարածայնությունների բոլոր գլխավոր հարցերը։ Ասածից յերեսում ե, վոր ընկ։ Ռիկովի հայտարարությունը մեզանում միասնական գծի առկայության մասին իրականության չի համապատասխանում։ Ասածից յերեսում ե, վոր մեզանում իրավես կա յերկու գիծ։ Մի գիծը—դա կուսակցության գլխավոր գիծն ե, մեր կուսակցության հեղափոխական լենինյան գիծը։ Մյուս գիծը—դա ընկ։ Բուխարինի խմբի գիծն ե։ Այս յերկորդ գիծը դեռևս վոշ-լիովին ե ձևավորված մասամբ այն պատճառով, վոր ընկ։ Բուխարինի խմբի շարքերում հայացքների աներեակայելի շիոթ կա, մասսամբ ել այն պատճառով, վոր նա, այդ յերկորդ գիծը, կուսակցության մեջ ունեցած իր տեսակարար կը ու կողմից թույլ լինելով, աշխատում ե այս կամ այն կերպ դիմակավորվել։ Բայց նա, այդ գիծը, ինչպես տեսնում եք, այնուամենայնիվ, գոյություն ունի վորպես մի գիծ, վորը տարբեր ե կուսակցության գծից, վորպես մի գիծ, վորն իրեն հակադրում ե կուսակցության գլխավոր գծին մեր քաղաքականության համարյա բոլոր հարցերում։ Այդ յերկորդ գիծը հիմնականում աջ թեքման գիծն ե։

Ընկ։ Բուխարինն այստեղ խոսում եր Քաղբյուրոյի յերեք անդամների «քաղաքացիական մահապատճի» մասին, վորոնց, նրա ասելով, մեր կուսակցության կաղմակերպությունները «մշակման են յենթարկում»։ Նա ասում եր, վոր կուսակցությունը Քաղբյուրոյի յերեք անդամներին՝ ընկ։ Ընկ։ Բուխարինին, Ռիկովին ու Տոմսկուն, քննադատելով մամուլում ու ժողովներում նրանց սխալները, «քաղաքացիական մահապատճի» յենթարկեց, մինչդեռ նրանք, Քաղբյուրոյի այդ յերեք անդամները,

«ստիպված» ելին լուկ։ Սրանք դատարկ բաներ են, ընկերներ։ Սրանք լիբերալություն անող կոմունիստի կեղծ խոսքեր են, վորը կուսակցության պառուտակները թուլացնելու (развититить) փորձ և անում աջ թեքման դեմ մղվող նրա պայքարում։

Բուխարինի մոտ դուրս ե գալիս, վոր յեթե ինքն ու իր բարեկամները խրվել են աջ ուկլոնիստական սխալների մեջ, ապա կուսակցությունն իրավունք չունի մերկացնելու այդ սխալները, կուսակցությունը պետք ե ղագարեցնի պայքարն աջ թեքման դեմ ու սպասի այն մոմենտին, յերբ ընկ։ Բուխարինին ու նրա բարեկամներին հաճելի հրաժարվել իրենց սխալներից։ Արդյոք ընկ, Բուխարինը չափազանց շատ բան չի պահանջում մեզանից։ Չլինի՞ թե նա կարծում է, թե կուսակցությունը կոյսություն ունի իրեն համար, և վոչ թե ինքը կուսակցության համար։ Իսկ նրան ո՞վ ե հարկադրում լրել, հանդսուի վիճակում մնալ, յերբ ամբողջ կուսակցությունը մորիլիցացիայի յե յենթարկված աջ թեքման դեմ ու վճռական դրուներ ե տալիս գժվարությունների դեմ։ Ինչո՞ւ նա, ընկ, Բուխարինը, և նրա մերձավորագույն բարեկամները հանդես չգան այժմ ու վճռական պայքար չմղեն աջ թեքման ու հաշովողականության դեմ։ Մի՞թե վորեւ մեկը կարող ե կասկածել, վոր կուսակցությունը կողղուներ ընկ։ Բուխարինին ու նրա մերձավորագույն բարեկամներին, յեթե նրանք վրձնելին անել այդ քայլը, վորն այնքան ել գժվար քայլ չե։ Իսկ նրանք ինչո՞ւ վճռականություն չեն ցուցարելի անելու այս վերջիւնը նրանց համար պարտադիր՝ քայլը։ Արդյոք վո՞չ այն պատճառով, վոր իրենց խմբի շահերից վեր են զատում։ Իսկ ո՞վ ե մեղավոր այն բանում, վոր աջ թեքման դեմ մղվող պայքարում ընկ։ Ընկ։ Բուխարինը, Ռիկովը և Տոմսկին բացակա գտնվեցին (օգազալիս ԲԵՐՅԱ)։ Պարզ չե՞ միթե, վոր Քաղբյուրոյի յերեք անդամների «քաղաքացիական մահապատճի» վերաբերյալ խոսակցությունները Քաղբյուրոյի յերեք անդամների վատ դիմակավորված վորնեն հարկադրելու կուսակցությանը, վոր լոի ու դադարեցնի պայքարն աջ թեքման դեմ։

Աջ թեքման դեմ պայքարելը մեր կուսակցության յերկորդական խնդիրը չե։ Աջ թեքման դեմ պայքարելը մեր կուսակցության վճռողական խնդիրից մեկն ե։ Յեթե մենք մեր սեփական շրջանում, մեր սեփական կուսակցության մեջ, ոլորտիքատիքատիքա քաղաքական շատարում, վորը ղեկավարում ե շարժումը

024

Ա վորն առաջ է տանում պրոլետարիատին, —յեթե մենք բուն իսկ այդ շաբում թույլատրենք, վոր ազատորեն դոյություն ունենան ու ազատորեն գործեն աջ ու կողմնիստները, վորոնք փորձում են դեմորիլիդացիայի յենթարկել կուսակցությունը, քայլացի բանվոր դասակարգը, հարմարեցնել մեր քաղաքականությունը «խորհրդային» բուրժուազիայի ճաշակին և այդաիսով մեր շինարարության գժվարությունների հանդեպ փաս լինել, —յեթե մենք այս ամենը թույլատրենք, ապա այդ ի՞նչ կնշանակի: Արդյոք այդ չի՞ նշանակի, վոր մենք կամենում ենք արգելակներով դեպի վայրեջք տանել հեղափոխությունը, քայլացի մեր սոցիալիստական շինարարությունը, գժվարություններից փախչել, դիրքերը հանձնել կապիտալիստական տարրերին: Բնկ. Բուխարինի էականության համար և արդյոք, վոր հրաժարվել աջ թեքման դեմ պայքարելուց՝ նշանակում ե դավանանել բանվոր դասակարգին, դավանանել հեղափոխությանը: Բնկ. Բուխարինի խումբը հասկանում է արդյոք, վոր առանց աջ թեքումն ու հաշտվողականությունը հաղթահարելու անհնարի և հաղթահարել մեր առջև կանդնած գժվարությունները, իսկ առանց այդ գժվարությունները հաղթահարելու անհնարի և սոցիալիստական շինարարության վճռողական հաջողություններ ձեռք բերել: Այս ամենից հետո ի՞նչ արդեք ունեն Քաղյուրոյի յերեք անդամների «քաղաքացիական մահապատժի» վերաբերյալ խղճուկ խոսքերը:

Վո՛չ, ընկերնե՛ր, «Քաղաքացիական մահապատժի» վերաբերյալ լիբերալ շաղակըստությամբ դուք կուսակցությանը չեք վախեցնի: Կուսակցությունը պահանջում է ձեղանից, վոր մեր կուսակցության ԿԿ-ի բոլոր անդամների հետ միենույն տողանում (шորենց) վճռական պայքար մղեք աջ թեքման ու հաշտվողականության դեմ: Կուսակցությունն այս բանը ձեղանից պահանջում է նրա համար, վոր հեշտացնի բանվոր դասակարգի մոռիլիդացիայի գործը, կազմակերպի սոցիալիզմի հարձակումն ամբողջ ձակատով, խորտակի դասակարգային թշնամիների գիմազրությունը և ապահովի մեր շինարարության գժվարությունների հաղթահարումը: Կա՛մ դուք կուսակցության այս պահանջը կկատարեք, և այն ժամանակ կուսակցությունը ձեզ կողջունի: Կա՛մ դուք այդ չեք անի, — բայց այն ժամանակ գժողութեցե՛ք ձեղանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԳԱՍԱԿԱՐԱՑԻՒԹԵՐՆ ՏԵՂՈՇԱՐԺԵՐՆ ՈՒ ՄԵՐ ՏԱՐԱՁԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
II. ՏԱՐԱՉԱՅԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԵՐՆԻ ԳԾՈՎ	14
III. ՏԱՐԱՉԱՅԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ	21
VI. ԱԶ ԹԵՔՄԱՆ ԴԵՄ ՊԱՅԻՆՎԵԼՈՒ ՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	74

Հայերն թարգմանությունը խմբագրեց Ս. Կիրակոսյան
Տեխն. խմբ. Ս. Խոչառյան
Սըբագրիչ Վ. Զիգեզյան
Կոնտրոլ սըբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտի լիազոր ի-71640, հրատ. № 485

Պատվիր. № 153, տիրաժ 10.000

Հանձնված և արտադրության 3/VIII 1937 թ.

Ստորագրված և տպելու 21/VIII 1937 թ.


Գինը 70 կ.

Հայկական տպարան, Երևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0185616



ԳԻՒԸ 70 Կ.

120

И. СТАЛИН
О ПРАВОМ УКЛОНЯ-
В ВКП (6)

Армпартиздат, Ереван, 1987